



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵՑՆԵԼ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՉԳԱՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Լուսինե Հովհաննիսյան

Ծուշան Ղահրիյան

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Չեկոյցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակ/ների տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	5
Քաղաքականության գենդերային ասպեկտը	5
Գենդերային զգայուն մակրոտնտեսական քաղաքականություն	8
Գենդերային զգայուն բյուջետավորում	9
Գենդերային զգայուն բյուջետավորման ազդեցությունը	10
Գենդերային զգայուն բյուջետավորման համար անհրաժեշտ պայմաններ	13
Գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման փուլեր	14
Գենդերային զգայուն բյուջետավորման գործիքակազմն ու մոդելները	18
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	19
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	21
Միջազգային փորձի ուսումնասիրություն	21
Իրավական փաստաթղթերի վերլուծություն	21
Գենդերային զգայուն բյուջետավորման գործիքների վերլուծություն	23
Վիճակագրական տվյալների վերլուծություն	25
Բյուջեի թափանցիկության համաթվերի վերլուծություն	27
Իրավիճակը Հայաստանում	28
Միջազգային պարտավորություններ	28
Փաստաթղթերի վերլուծություն	28
Վիճակագրական տվյալներ	30
ՀՀ պետական բյուջեի վերլուծություն	34
Խորին հարցազրույցների արդյունքների ամփոփում	36
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	38
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	41
Ուսումնասիրված փաստաթղթեր	44

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գենդերային անհավասարության և խտրականության կանխարգելումը մի շարք պետությունների օրակարգում է: Գենդերային քաղաքականությունը, ի տարբերություն պետության մի շարք այլ քաղաքականությունների, երկար պատմություն չունի: Գենդերային բաղադրիչը մուտք է գործել միջազգային իրավական մի շարք փաստաթղթեր և պետությունների քաղաքականություն նախորդ դարակեսին (UN Women, 2016):

Նախկինում քաղաքականությունները չէին դիտարկվում գենդերային տեսանկյունից, իսկ այժմ դրանք բաժանվում են երեք խմբի՝ գենդերի նկատմամբ կույր (gender blind), գենդերի նկատմամբ իրազեկ (gender aware), գենդերի նկատմամբ վերաբաշխող (gender redistributive) (Djordjevic, 2016; Heintz, 2019; True, 2003): Տարիներ շարունակ պետության մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը գենդերային հավասարության վրա անտեսված է եղել, իսկ ֆիսկալ գործիքները միշտ եղել են գենդերի նկատմամբ կույր (True, 2003; Heintz, 2019): Սակայն նախորդ դարավերջից սկսած գենդերային բաղադրիչը մուտք գործեց նաև մակրոտնտեսական քաղաքականություն: Այն ամրագրվեց միջազգային փաստաթղթերով, իսկ գենդերային զգայուն բյուջետավորումը, որպես մակրոտնտեսական քաղաքականության գործիք, մտավ մի շարք պետությունների օրակարգ (UN General Assembly, 1979):

Գենդերային զգայուն բյուջետավորման մեկ ընդհանուր սահմանում գրականության մեջ չկա: Փոխարենը բոլոր հեղինակներն ու միջազգային կազմակերպությունները կոնսենսուս ունեն, որ այն գենդերային հավասարությունը խթանելու, իսկ խտրականությունը կանխարգելելու լավագույն միջոցն է: Այս գործիքը սահմանվում է որպես գենդերային հիմնահարցերի համալիր մոտեցման կիրառում հանրային ֆինանսներում (Council of Europe, 2005): Այն ենթադրում է գենդերային տեսանկյունից բյուջե(ներ)ի ուսումնասիրություն, բյուջետային բոլոր գործընթացներում գենդերային բաղադրիչի ներմուծում և գենդերային հավասարության խթանման նպատակով պետական եկամուտի և ծախսի վերաբաշխում:

Գրականության ուսումնասիրությունը փաստում է, որ մակրոտնտեսական քաղաքականությունը, այդ թվում՝ բյուջետավորումը, էական ազդեցություն է ունենում մարդկանց կենցաղի, հասարակության մեջ առկա կարծրատիպերի և գենդերային դերերի ձևավորման վրա (Sodani and Sharma, 2008; Baurciulu et al., 2016): Ուստի, գենդերային զգայուն բյուջետավորումը երաշխավորում է հաշվետվողականությունն ու պետական կառավարման համակարգի թափանցիկությունը, քանի որ պետական բյուջեն նախագծելիս հասանելի ֆինանսական միջոցները թիրախավորվում են հասարակական և սոցիալական խմբերի վրա ավելի մեծ ազդեցություն թողնելու ուղղությամբ (Klatzer & Ivanina, 2015): Հետևաբար, այն արդյունքահեն և արդյունամետ մոտեցում է (Quin, 2009; Elson, 2002): Բացի պետական կառավարման և հանրային ֆինանսների արդյունավետության բարձրացումից, գենդերային զգայուն բյուջետավորումը իրականություն է դարձնում քաղաքացիական հասարակության և պետական մարմինների արդյունավետ համագործակցությունը:

Այս գործիքակազմի արդյունավետ ներդրման համար, սակայն, անհրաժեշտ են մի շարք նախապայմաններ: Դրանցից առաջինը բարենպաստ օրենսդրական դաշտի առկայությունն է: Ոչ պակաս կարևոր են նաև պետական մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները, հանրային ֆինանսների կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրումը, ինչպես նաև սեռով տարբերակված ազգային վիճակագրության առկայությունը (Baurciusu et al., 2016):

Բազմաթիվ են ուսումնասիրությունները, որոնք վկայում են գենդերային զգայուն բյուջետավորման դրական ազդեցության մասին թե՛ կայուն զարգացման, թե՛ բյուջեի արդյունավետության բարձրացման տեսանկյունից (OECD, 2018; Rubin & Bartle, 2005; Kanuri et al., 2016): Հայաստանյան իրականության մեջ մի շարք հետազոտություններ անդրադառնում են երկրում առկա գենդերային դերերին, կարծրատիպերին և դրանց ազդեցությանը:

Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով և ստորագրելով Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Պեկինյան հռչակագիրը, Եվրոպայի խորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերը, ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրն ու դրան հետևող այլ համաձայնագրեր, պարտավորվել է քայլեր ձեռնարկել գենդերային հավասարության խթանման ուղղությամբ՝ այդ թվում ներդնելով գենդերային զգայուն բյուջետավորման բաղադրիչ: Չնայած գենդերային քաղաքականություններին վերաբերող բազմոլորտ հետազոտություններին, Հայաստանում ուսումնասիրված չէ գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման հնարավորությունը: Այս ուսումնասիրությունը նպատակ ունի առկա գրականության և միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում մշակելու Հայաստանի Հանրապետության համար գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման արդյունավետ մոդել:

Աշխատանքը բաժանված է 4 մասերի: Առաջին մասում ամփոփված են հիմնական կոնցեպտների վերաբերյալ գրականության մեջ առկա տեսական և գործնական մոտեցումները: Երկրորդ հատվածը մեթոդաբանության ներկայացումն է: Երրորդ մասում ներկայացված է տվյալների վերլուծությունը, այդ թվում՝ հայաստանյան իրավիճակային վերլուծությունը, միջազգային փորձի ուսումնասիրությունը և փորձագիտական հարցազրույցների արդյունքները: Տվյալների ներկայացմանն ու քննարկմանը հաջորդում է վերջին՝ չորրորդ հատվածը, որտեղ տեղ են գտել հետազոտության արդյունքում մշակված հիմնական առաջարկություններն ու գենդերային զգայուն բյուջետավորման հայաստանյան մոդելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՄՊԵԿՏԸ

Առաջին պետությունների կազմավորումից սկսած մինչ օրս պետական քաղաքականություններն ուղղված են եղել հասարակության մեջ առկա տարբեր խնդիրների լուծմանը: Մինչև 1950-ականները քաղաքականությունները ոչ միայն հաշվի չէին առնում երկու սեռերի տարբերությունների վրա հիմնված կարիքների բազմազանությունը, այլ նաև գիտության տարբեր գիտակարգերում դեռևս չէր ներմուծվել «գենդեր» եզրույթը: Այն առաջին անգամ գիտության մեջ օգտագործվել է ամերիկացի հոգեվերլուծաբան Ռոբերտ Ստոլլերի կողմից, ով եզրույթը կիրառել է անձի կենսաբանական և սոցիոմշակութային էությունների տարբերությունն ընդգծելու համար (Stoller, 1984 [1968]): Ըստ Սթոլլերի՝ սեռը արտացոլում է մարդու կենսաբանական հատկանիշները, իսկ գենդերը արժեքների, մեկնաբանությունների և դիրքորոշումների համակարգ է: Այս եզրույթի կիրառումով ավարտվեց սեռերի սոցիոլոգիական և մշակութային վերլուծության ավանդական փուլը, որի հիմքում երկու սեռերի միայն կենսաբանական տարբերություններն էին:

Գենդերը՝ որպես սոցիալական կոնստրուկտ, վերաբերում է ոչ թե տղամարդուն կամ կնոջը, այլ նրանց հարաբերություններին, մասնավորապես, թե ինչպես են այդ հարաբերությունները ստեղծվում և կերտվում հասարակության կողմից (Lorber, 2001): Այսպիսով, գենդերը սոցիալական և մշակութային նորմերի ամբողջություն է, որը ցույց է տալիս հասարակության մեջ կանանց և տղամարդկանց հարաբերությունների տարբերությունները և ժամանակի ընթացքում կարող է փոփոխվել:

«Գենդեր» եզրույթի ստեղծումից հետո այն սկսեց օգտագործվել տարբեր գիտակարգերում՝ մուտք գործելով միջազգային իրավական փաստաթղթեր, որը կարելի է բաժանել հետևյալ փուլերի (Baurciusu et al., 2016).

1940-60-ականներ: Այս ժամանակաշրջանում էր, երբ գենդերային հավասարությունը դարձավ մարդու իրավունքների կարևորագույն տարր և ընդգրկվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: Այս փուլի հիմնական առանձնահատկությունը դարեր շարունակ քաղաքացիական իրավունքներից զուրկ կանանց որոշակի իրավունքների շնորհումն էր (ընտրելու և ընտրվելու իրավունք, քաղաքական գործընթացներին մասնակցելու իրավունք և այլն):

1970-80-ականներ: Այս փուլի հիմնական նպատակը կանանց մասնակցության մակարդակի բարձրացումն էր, որն ամրագրվեց Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա) 1979 թվականին: Այս ընթացքում հետաքրքրության հիմնական առարկան ընտանեկան և սեռական բռնությունն էր, վերարտադրողական առողջությունը, բարձրագույն կրթության և աշխատաշուկայի հասանելիությունը: Այս փուլում պետությունները եկան այն եզրահանգման, որ ազգային և միջազգային մակարդակներում կայացված որոշումները կարող են տարբեր ազդեցություն ունենալ կանանց և տղամարդկանց վրա: Ուստի, գենդերային հավասարության հիմնախնդրին համալիր մոտեցումը (gender mainstreaming) առաջին անգամ սկսեց կիրառվել 1985 թվականին Նաիրոբիում տեղի

ունեցած Կանանց դրությանը նվիրված երրորդ համաշխարհային խորհրդաժողովի ընթացքում:

1990-ականներ: Այս ժամանակահատվածի առանձնահատկությունը դարձան գենդերային մոտեցումների զարգացումն ու կանանց զորեղացումը, որին հասնելու համար ուղենշային էին առկա գենդերային հարաբերությունների փոխակերպումը՝ ռեսուրսների հավասար վերահսկման ու բաշխման միջոցով: Այս մոտեցումը ամրագրվեց 1995 թ. մարտի 9-ին Պեկինում անցկացված Կանանց դրությանը նվիրված չորրորդ համաշխարհային խորհրդաժողովի ընթացքում և դրա արդյունքում ընդունված ուղենշային Գործողությունների ծրագրի մեջ: Խորհրդաժողովը դարձավ այն անկյունաքարը, որով գենդերային մեյնսթրիմինգը բարձրացվեց մի նոր մակարդակի: Հատկապես կարևորվում էր բոլոր քաղաքականություններում և ծրագրերում գենդերային տեսանկյունի ինտեգրումը, որպեսզի ծրագրերի ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա չափվի դրանց իրականացման բոլոր փուլերում:

2000-ականներ: Այս փուլը նշանավորվեց Հազարամյակի զարգացման ութ նպատակներով, որոնցից երրորդը վերաբերում է գենդերային հավասարության խթանմանն ու կանանց զորեղացմանը: Ավելին, որոշվեց, որ մյուս բոլոր նպատակների իրականացումը պետք է գնահատվի գենդերային հավասարության տեսանկյունից:

2000-2015 թվականներ: Այն պետությունները, որոնք նախկինում ստորագրել էին Պեկինի չորրորդ խորհրդաժողովի փաստաթղթերը, սկսեցին ակտիվորեն ներդնել գենդերային մեյնսթրիմինգը: Պեկինյան սկզբունքների իրագործումը հատկապես օրակարգային դարձավ եվրոպական կազմակերպությունների (Եվրոպական միություն, Եվրոպայի խորհուրդ) համար, որոնք այս հայեցակարգը ներմուծեցին իրենց ազգային օրենսդրություններ և քաղաքականություններ: Այս գործընթացն անարգել կազմակերպելու համար Եվրոպայի խորհրդի նախաձեռնությամբ ստեղծվեց գենդերային մեյնսթրիմինգի ուսումնասիրման մասնագետների խումբ, ովքեր պետք է մշակեին գենդերային բաղադրիչի ներդրման մեթոդաբանություններ:

2015 թվականից մինչ օրս գենդերային բաղադրիչը քննարկվում է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների շրջանակներում, որոնցից 5-րդը վերաբերում է գենդերային հավասարությանն ու կանանց և աղջիկների զորեղացմանը: Բացի դրանից, Ամուր առողջության և բարեկեցության նպատակի թիրախներից մեկը մայրական մահացության դեպքերի նվազեցումն է, որը հնարավոր կլինի վերականգնողական առողջությանն ուղղված համակողմանի քաղաքականության կիրառման արդյունքում: Ավելին՝ Որակյալ կրթության նպատակը ուղղված է վերացնելու գենդերային անհավասարությունն ու անհամամասնությունը կրթության ոլորտում, իսկ Արժանապատիվ աշխատանքի և տնտեսական աճի նպատակը թիրախավորում է գենդերային հավասարությունն աշխատավայրում: Մասնավորապես, կարևորվում է կանանց ու տղամարդկանց համար անհրաժեշտ պատշաճ աշխատանքային պայմանների և միջավայրի ապահովումը:

Ինչպես երևում է, 1985 թվականից սկսած համալիր մոտեցումը գենդերային հավասարության խնդրին (գենդերային մեյնսթրիմինգ) մտավ միջազգային կազմակերպությունների և զարգացած պետությունների օրակարգ: Պեկինի չորրորդ

խորհրդաժողովում ընդունված գործողությունների ծրագրում գենդերային մեյնսթրիմինգը դիտարկվում է որպես գենդերային հավասարության հասնելու լավագույն և ամենաարդյունավետ միջոցը: Այն սահմանում է, որ կառավարությունները պիտի անեն հնարավորը գենդերային բաղադրիչը բոլոր քաղաքականություններում և պետական ծրագրերում ներառելու համար: Ավելին, «Մինչ որոշման կայացումը պետք է վերլուծության ենթարկվի կանանց և տղամարդկանց վրա դրա (ծրագրերի [հեղ.]) ազդեցությունը» (Beijing Declaration and Platform for Action, 1995, 27): Մյուս կողմից, ՄԱԿ-ի սոցիալական և տնտեսական խորհուրդը և Չարգացման ծրագիրը նշում են կանանց և տղամարդկանց անհանգստություններն ու փորձառությունը հաշվի առնելու կարևորությունը քաղաքական, սոցիալական և տնտեսական ծրագրերի և քաղաքականությունների նախագծման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման փուլերում, որպեսզի թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ հավասարապես օգտվեն պետության առաջարկած հնարավորություններից: Եվրոպական միությունն ու Եվրոպայի խորհուրդը մեյնսթրիմինգը դիտարկում են որպես որոշումների կայացման գործում բոլոր ոլորտներում և մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասարությունը (վերա)ձևակերպելու և բարելավելու գործիք (EIGE, 2016; Council of Europe, 2005):

Այսպիսով, միջազգային մի շարք փաստաթղթերով գենդերային բաղադրիչը ներմուծվեց նաև պետության քաղաքականություն (True, 2003; Heintz, 2019): Սակայն, գենդերային մեյնսթրիմինգը հանրային քաղաքականությունում ներդնելը պահանջում էր գործող քաղաքականությունների համապարփակ որակային ուսումնասիրություն: Հարկ է նշել, որ պետական ընթացակարգերն ու քաղաքականությունները շարունակ եղել են գենդերի նկատմամբ կողմնակալ: Ըստ այդմ՝ հանրային քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի կիրառումը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով քաղաքականությունները սկսեցին դասակարգվել որպես գենդերի նկատմամբ կույր (gender blind), գենդերի նկատմամբ իրազեկ (gender aware), գենդերի նկատմամբ վերաբաշխող (gender redistributive) (Djordjevic, 2016; Heintz, 2019; True, 2003):

Գենդերի նկատմամբ կույր քաղաքականությունները հաշվի չեն առնում երկու սեռերի միջև տարբերությունները և հաճախ բացառում են կանանց: Գենդերի նկատմամբ իրազեկ քաղաքականությունները ճանաչում են, որ կանայք հասարակության զարգացման գործում տղամարդկանց հավասար կարևոր դեր ունեն, և որ կանանց ներգրավվածությունը հաճախ որոշվում է հասարակության մեջ առկա գենդերային հարաբերություններով, նորմերով և կարծրատիպերով, որոնց պատճառով կանանց մասնակցությունը դառնում է տղամարդկանցից տարբեր և հաճախ անհավասար: Հետևաբար, այս քաղաքականություններն ընդունում են, որ կանայք կարող են ունենալ տարբեր կարիքներ, շահեր և առաջնահերթություններ, որոնք հաճախ կարող են հակասել տղամարդկանց կարիքներին և շահերին (Baurciusu et al., 2016):

Գենդերի նկատմամբ իրազեկ քաղաքականություններն, իրենց հերթին, բաժանվում են երկու խմբի՝ չեզոք գենդերային (gender neutral) և հատուկ գենդերային (gender specific): Չեզոք գենդերային քաղաքականությունները օգտագործում են գենդերային տարբերությունների վերաբերյալ հասարակության մեջ առկա գիտելիքը և սահմանում են այնպիսի խնդիրներ և նպատակներ, որոնք թույլ կտան հաղթահարել կողմնակալ վերաբերմունքն ու կարծրատիպերը (Dingo, 2012; Woodward, 2011): Շատ կարևոր է, որ այստեղ պետության միջամտության շնորհիվ արդյունավետ օգուտ

քաղեն երկու սեռերը հավասարապես՝ ելնելով նրանց տարբեր կարիքներից: Հատուկ գենդերային քաղաքականություններն էլ նպատակ ունեն հասցեագրելու և բավարարելու այն հատուկ կարիքները, որ ունեն կանայք և տղամարդիկ՝ ելնելով իրենց գենդերային առանձնահատկություններից և հասարակության մեջ առկա նորմերից (Dingo, 2012; Woodward, 2011):

Գենդերի նկատմամբ վերաբաշխող քաղաքականությունները նպատակ ունեն փոխակերպելու առկա բաշխումները: Այս քաղաքականությունները կարող են թիրախավորել կանանց և տղամարդկանց թե՛ առանձին, թե՛ նրանցից յուրաքանչյուրից որոշակի խմբի (Neundorf & Soroka, 2018): Վերաբաշխող քաղաքականությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք գործում են ոչ միայն թիրախային խմբի կարիքների բավարարման համար, այլ նաև ունեն փոխակերպող բնույթ, որն օգնում է ստեղծել խտրականված խմբի համար անհրաժեշտ աջակցող և զորեղացնող պայմաններ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՉԳԱՅՈՒՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանրային քաղաքականության համատեքստում մակրոտնտեսական քաղաքականությունը կարևոր դեր ունի: Դրա հիմնական խնդիրը տնտեսության արդյունավետ աշխատանքի համար մեխանիզմների առաջարկումն է (Quiggin, 2014): Մակրոտնտեսական փոփոխականներն օգնում են հասկանալ քաղաքականության ուղղակի և անուղղակի ազդեցությունները, որով հիմք է դրվում նաև նոր որոշումների կայացման համար: Այս քաղաքականություններն ուղղված են երկրում առկա մարդկային և բնական ռեսուրսների, ինչպես նաև կապիտալի ծախսարդյունավետ (efficient) օգտագործմանը, որպեսզի բավարարվեն հասարակության կարիքները: Այս գործողություններն ուղղակի ազդեցություն ունեն տնտեսության ճյուղերի, ՏԻՄ և պետական բյուջեի, պետական եկամուտների և ծախսերի, քաղաքացիների խնայողությունների, ներդրումների, ինչպես նաև տնտեսության աճի տեմպի վրա:

Տարիներ շարունակ մակրոտնտեսական քաղաքականությունը դիտարկվել է որպես գենդերային տեսանկյունից չեզոք (Djordjevic, 2016; Heintz, 2019; Holvoet, 2006; True, 2003): Սակայն, պետք է հաշվի առնել, որ մակրոտնտեսական միջավայրը կարող է սահմանափակել կամ խթանել մարդկանց բարեկեցությունը՝ հաշվի առնելով գենդերային տարբերությունները (Debusscher, 2012; Segwino, 2019): Սրանից հետևում է, որ գենդերային հավասարության հասնելու համար անհրաժեշտ է ունենալ նաև խթանող և զորեղացնող մակրոտնտեսական միջավայր/քաղաքականություն:

Քանի որ մակրոտնտեսական փոփոխականները ազդեցացված են, իսկ գենդերային անհավասարությունն ավելի հեշտ է դիտարկել միկրո մակարդակներում, դասական տնտեսագիտության մեջ կարծիք է ձևավորվել, որ այս քաղաքականությունները տարբեր ազդեցություն չեն կարող ունենալ կանանց և տղամարդկանց վրա: Սակայն այս պնդումն անհիմն է մի քանի պատճառով (Baurcius et al., 2016):

Առաջին, մակրոտնտեսական քաղաքականության համար պատասխանատու ինստիտուտները ներգրավված են սոցիալական և տնտեսական մի շարք գործընթացներում: Այդ ինստիտուտներն ապահովում են կանանց և տղամարդկանց համար ռեսուրսների հասանելիությունն ու դրանց նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև մասնակցության հնարավորությունների առկայությունը, և թե ինչպես

կարող են երկու խմբերը շահել տնտեսության զարգացումից, արժեքաստեղծումից և աղքատության կրճատումից:

Երկրորդ, տնտեսության բոլոր մակարդակները փոխկապակցված են: Եթե միկրոմակարդակում գենդերային տարբերություններն ու անհավասարությունն ակնհայտ է նշանակում է, որ դրանք կարող են փոխանցվել նաև հաջորդ մակարդակ: Այսպիսով, միկրո մակարդակում անհավասարություններն ուղղակի ազդեցություն ունեն մակրոտնտեսական քաղաքականության վրա, որն էլ իր հերթին ներգործություն է ունենում ավելի ցածր մակարդակների վրա:

Երրորդ, կանայք և աղջիկները պատասխանատու են նաև տնային աշխատանքի համար, որը հավելյալ բեռ է և որակվում է որպես չվճարվող աշխատանք: Սա նշանակում է, որ պետությունն իր մարդկային կապիտալի զգալի մասն անարդյունավետ է օգտագործում, քանի որ կատարված չվճարվող աշխատանքն էապես ազդում է ընդհանուր աշխատաշուկայի արտադրողականության վրա, որն էլ հենց մակրոտնտեսական քաղաքականության ուսումնասիրման առարկաներից մեկն է:

Այսպիսով, ակնհայտ է, որ մակրոտնտեսությունը մեծ ազդեցություն ունի գենդերային հարաբերությունների կառուցման վրա, քանի որ այն պայմանավորում է մարդկային կապիտալի իրացումը, որն էլ ապահովում է հասարակության/պետության ընդհանուր զարգացումը:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ

Մակրոտնտեսական քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի ներդրման ամենաարդյունավետ միջոցներից մեկը բյուջետավորումն է: Բյուջետավորման նպատակը պետական սուղ ֆինանսական միջոցների բաշխումն է տարբեր ոլորտներում: Քանի որ պետական առաջնահերթությունները տարբեր են, բյուջետավորման հիմնական նպատակը ռեսուրսների այնպիսի բաշխումն է, որը կկարողանա ապահովել առավելագույն հանրային բարեկեցություն (Steccolini, 2019; Ornstein et al., 2008): Քաղաքականության տեսանկյունից բյուջեն պետության ֆինանսական հայելին է: Այն արտացոլում է ողջ պետական ծրագրերը, հետևաբար՝ պետության կարևորագույն քաղաքականությունն է: Բյուջեն է արտացոլում պետության առաջնահերթություններն ու արժեքները, քանի որ ցույց է տալիս տարբեր ոլորտներում աջակցության չափը, իրականացվելիք գործողությունները կամ դրանց բացակայությունը: Բյուջեի վերաբերյալ հանրային ընկալումները միֆականացված են, քանի որ օգտագործվող լեզուն շատերի համար հասկանալի չէ, սակայն դրա ազդեցությունը գների, հարկերի չափի կամ անշարժ գույքի շուկայի վրա մարդկանց ամենօրյա կյանքի բաղկացուցիչն է:

Առանձնացվում է բյուջետավորման երկու տեսակ (Schick, 1988)՝ միկրո և մակրո: Միկրոբյուջետավորումը ենթադրում է որոշումների կայացման վարից վեր գործընթաց, մինչդեռ մի շարք հարցեր և սահմանափակումներ (օրինակ՝ օրենսդրական կամ տնտեսական խնդիրներ, սոցիալական առաջնահերթություններ) պահանջում են ավելի համակարգված մոտեցում, որի իրագործման համար որոշումները կայացվում են վերից վար տրամաբանությամբ (մակրոբյուջետավորում): Գենդերային հավասարության հասցեավորումը հենց մակրոբյուջետավորման խնդիրն է, քանի որ այն պահանջում է գենդերային հիմնահարցերի համալիր մոտեցման արդյունավետ ներդրում մակրոտնտեսական քաղաքականության մեջ:

Գենդերային զգայուն բյուջետավորումը սահմանվում է որպես գենդերային հիմնահարցերի համալիր մոտեցման կիրառում հանրային ֆինանսներում (Council of Europe, 2005): Այն ենթադրում է գենդերային տեսանկյունից բյուջե(ներ)ի ուսումնասիրություն, բյուջետային բոլոր գործընթացներում գենդերային բաղադրիչի ներմուծում և գենդերային հավասարության խթանման նպատակով պետական եկամուտի և ծախսի վերաբաշխում: Գենդերային զգայուն բյուջետավորման մեկ այլ սահմանում այն դիտարկում է որպես տարբեր գործիքների և մեխանիզմների միջոցով գենդերային մոտեցումների ինտեգրում հանրային քաղաքականության և տնտեսության ղեկավարման բոլոր մակարդակներում (Sharp, 2003): Այսինքն՝ գենդերային զգայուն բյուջետավորումը ազգային բյուջեի ձևավորման և իրականացման մարդակենտրոն մոտեցում է (Quinn, 2013): Գրականության մեջ այն դիտարկվում է որպես բյուջետավորման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված ռազմավարություն (Sharp, 2003): Այս գործընթացի հիմնական միտումը ներդրվող միջոցների փոխարեն արդյունքների վրա կենտրոնանալն է (Joyce, 2003): Գենդերային զգայուն բյուջետավորման իրականացման դեպքում ստացած արդյունքը և դրա չափման մեխանիզմները դառնում են բյուջետային որոշումների կարևորագույն մասը: Հետևաբար, բյուջետավորման այս տեսակի հիմնական նպատակը հանրային ծառայությունների ծախսարդյունավետության բարձրացումն է: Քանի որ գենդերային զգայուն բյուջետավորումը կենտրոնանում է գենդերային հավասարության ավելի լավ մակարդակ ապահովելու վրա, հատկապես կարևոր է իմանալ պետական ծրագրերի շահառուների իրական կարիքները, որպեսզի ծառայությունները լինեն ավելի թիրախավորված (Quinn, 2013; Budlender et al., 2002): Կարիքների բավարարումը նշանակում է համակողմանի պատկերացում ունենալ, թե ինչպես են գենդերային տարբերություններն ազդում այդ կարիքների վրա: Ուստի, գենդերային զգայուն բյուջետավորման դեպքում ուսումնասիրվում են բյուջետային հատկացումների ազդեցությունը տղամարդկանց և կանանց տնտեսական և սոցիալական հնարավորությունների վրա (Council of Europe, 2009): Պետական ծախսերի ազդեցության գնահատումը գենդերային զգայուն բյուջետավորման անբակտելի մասն է (Aristovnik & Seljak, 2009): Գնահատումն իրականացվում է գենդերային ցուցիչների միջոցով, որոնց նպատակը ժամանակի ընթացքում կանանց և տղամարդկանց հարաբերությունների մեջ փոփոխությունների մատնանշումն է (Norton et al., 2002; Elson, 2001):

Գենդերային զգայուն բյուջետավորումը ընդհանուր տնտեսական քաղաքականությանն առնչվում է թե՛ միկրո, թե՛ մակրո մակարդակներում: Մակրոմակարդակում այն դիտվում է որպես ֆիսկալ քաղաքականության գործիք, իսկ միկրո մակարդակում ամբողջացնում է այն մեխանիզմները, որոնք նպաստելու են գենդերային բաղադրիչի ներդրմանը պետական բոլոր քաղաքականություններում և ծրագրերում: Մակայն այս բաժանումը պարզունակ է, քանի որ միկրո և մակրո մակարդակներն առանձնացնող հստակ սահմանագիծ չկա (Grown et al, 2000; Elson, 1998):

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Մակրոտնտեսական քաղաքականության ազդեցությունը չի սահմանափակվում միայն տնտեսական բնույթով: Գենդերային հարաբերությունների տարբերությունների պատճառով փոխվում է կանանց և տղամարդկանց կենսամակարդակը տնային

տնտեսություններում և հասարակությունում (Holvoet, 2006): Մասնավորապես, ճգնաժամների ժամանակ, մակրոտնտեսական քաղաքականության, այդ թվում՝ բյուջետավորման ազդեցությունը սոցիալական հիերարխիաների վրա ակնհայտ է դառնում, որի հետևանքով խորանում են կարծրատիպերը, բռնությունը, պիտակավորումը: Այս ամենի հիմնական պատճառն այն է, որ մակրոտնտեսական քաղաքականությունը, ծախսերի կրճատումն ու վերաբաշխումը ուղղակի ազդեցություն են ունենում աշխատանքի հնարավորությունների վրա, այսինքն՝ սոցիալական տարբեր խմբեր սկսում են ավելի քիչ գումար վաստակել, իսկ կանանց դեպքում՝ տնտեսական կախվածությունը տղամարդկանցից խորանում է:

Համաշխարհային բանկի կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ գենդերային զգայուն բյուջետավորման միջոցով հավասարության բարելավումը «խելացի տնտեսություն» ունենալու նախապայման է և խթանում է կայուն տնտեսական աճն ու զարգացումը: Մակրոտնտեսական քաղաքականության և բյուջեի ուսումնասիրումը գենդերային և մարդու իրավունքների տեսանկյունից հանգեցնում է մի կողմից հանրային ֆինանսների վերակազմակերպմանն ու օպտիմալացմանը, իսկ մյուս կողմից՝ ունենում ավելի խորը ազդեցություն պետական ծրագրերի շահառուների և ամբողջ տնտեսության վրա (UNWOMEN, 2015):

Գենդերային զգայուն բյուջետավորումը արդյունամետ մոտեցում է: Այն հիմնված է շարունակական գնահատման վրա, որի միջոցով հնարավոր է դառնում նոր և ավելի բարձր թիրախների սահմանումն ու դրանց հասնելու ճանապարհների ուրվագծումը (Quinn, 2013; Sharp, 2003): Այս գործընթացը կապում է հավասարության քաղաքականությունն ու հանրային ֆինանսների կառավարումը, որի արդյունքում առկա ռեսուրսներն ավելի արդյունավետ են բաշխվում:

Գրականության մեջ առկա ձևակերպումները (Holvoet, 2006; Quinn, 2009; Baurcius et al., 2016) ցույց են տալիս, որ գենդերային զգայուն բյուջետավորումը երաշխավորում է հաշվետվողականությունն ու պետական կառավարման համակարգի թափանցիկությունը, քանի որ պետական բյուջեն նախագծելիս հասանելի ֆինանսական միջոցները թիրախավորվում են հասարակական և սոցիալական խմբերի վրա ավելի մեծ ազդեցություն թողնելու ուղղությամբ: Այսինքն՝ ցանկացած թվային արժեքի հետևում հստակեցված է շահառուների խումբն ու նրանց վրա ծրագրերի ազդեցությունների առանձնահատկությունները: Գենդերային զգայուն բյուջետավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ այս կերպ քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է ունենում մասնակցելու պետական կառավարմանը՝ մատնանշելով այն կետերը, որտեղ առավել շատ ռեսուրսների ուղղումն ավելի արդյունավետ կլինի: Ակնհայտ է, որ այս քաղաքականությունը որդեգրելով՝ պետությունները բարելավում են բյուջետավորման գործընթացը, դրա պլանավորումն ու գործողությունների համակարգումը, քանի որ պարտավորվում են իրականացնել ազդեցության գնահատում, առաջնահերթությունների ուսումնասիրում, արդյունավետ պլանավորում, ծրագրերի մշտադիտարկում և տվյալների շարունակական հավաքագրում բյուջեի կատարման ողջ ընթացքում: Սա օգնում է գտնել այն ոլորտները, որոնք մյուսներից ավելի շատ ֆինանսավորման կարիք ունեն՝ բարձրացնելով ծախսարդյունավետությունն ու արտադրողականությունը, որոնք տնտեսական աճի նախապայման են: Տնտեսական նոր՝ գենդերային զգայուն ցուցանիշների սահմանումն ու ներդրումը օգնում է ավելի խորը պատկերացում

ունենալ պետական ծախսերի և հարկային համակարգի ազդեցության մասին՝ օգնելով բարեփոխել այն:

Գենդերային զգայուն բյուջետավորումն օգնում է զարգացնել արդյունավետ և հաջողակ կառավարման մեթոդներ: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հետազոտությունները (Downes et al., 2016) ցույց են տալիս, որ գենդերային զգայուն բյուջետավորումն ազդում է բյուջետավորման գործընթացի թափանցիկության վրա: Բյուջեի թափանցիկությունը սահմանվում է որպես անհրաժեշտ ողջ ֆիսկալ տեղեկատվության վերհանում, որը տեղի է ունենում պարբերաբար և համակարգային մոտեցմամբ: Այսպիսով, ՏՀԶԿ հետազոտությունները ցույց են տալիս գենդերային զգայուն բաղադրիչի դրական ազդեցությունը բյուջեի կառավարման գործընթացի թափանցիկության վրա, քանի որ այս բաղադրիչը (Downes et al., 2016; Baurciusu et al., 2016; Quinn, 2013)՝

- վերհանում և ընդգծում է սեռերի միջև առկա տարբերությունները,
- ջանքերը կենտրոնացնում է տղամարդկանց և կանանց համար հնարավորություններ ստեղծելու, բնակչության խնդիրներին ուղղված լուծումներ ձևակերպելու կարողությունների բարելավման վրա,
- շեշտադրում է գենդերային վերլուծության կարևորությունը, որն իր հերթին հանգեցնում է պահանջվող գործողությունների նախագծման ավելի մեծ ճշգրտության, ինչն էլ վկայում է տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության և իրականացվող գործողությունների որակի բարձրացման մասին,
- պահանջում է ավելի խորը վերլուծություն և գիտելիքների հավաքագրում. սա հանգեցնում է իրազեկվածության բարձրացմանը,
- թե՛ գործադիր, թե՛ օրենսդիր իշխանությունների և թե՛ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար հնարավորություն է ընձեռում մշտադիտարկել երկրի գենդերային հավասարության ցուցանիշները, նպատակները և խնդիրները, ինչպես նաև արագ արձանագրել գրանցվող փոփոխությունները:

Հետևաբար, կարող ենք պնդել, որ պետական ծրագրերը և քաղաքականությունները իրապես կարտացոլեն սոցիալական տարբեր խմբերի շահերն ու կարիքները միայն այն դեպքում, երբ ունենան գենդերային զգայունություն, որին հնարավոր կլինի հասնել բյուջետավորման շնորհիվ:

Միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները (Council of Europe, 2009; OECD, 2018) ցույց են տալիս, որ պետական ծախսի և եկամուտների ազդեցությունը կանանց և աղջիկների վրա տարբեր երկրներում հասարակական և քաղաքական մեծ հնչեղություն է ստանում՝ վերածվելով գորբալ շարժման, որի նպատակը սոցիալական տարբեր խմբերի առաջ պետության հաշվետվողականության զարգացումն ու բարձրացումն է: Գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման մեխանիզմներն ու գործիքները բազմազան են, սակայն դրա արդյունավետ կիրառումը պետությանը մեծ օգուտներ է բերում՝ հաշվի առնելով (Quinn, 2009, Sharp & Schech, 2007)՝

- պետական ծախսի արդյունավետության բարձրացումը,

- անհավասար պայմաններում և օգնության ավելի մեծ կարիք ունեցող խմբերի վիճակի բարելավումը,
- հանրային ծառայությունների բարելավված մշտադիտարկումը,
- հաշվետվողականության, թափանցիկության, մասնակցության բարձր մակարդակը,
- քաղաքացիական հասարակության հետ աշխատելու անհրաժեշտությունը, որը երկրի ժողովրդավարական զարգացման և արդյունավետ կառավարման ուղենիշներից է,
- ազգային և միջազգային պարտավորությունների կատարումը,
- ավելի լավ և արդյունավետ իրազեկման միջոցառումների առկայությունը:

Հատկապես կարևոր է նշել, որ բյուջեի գենդերային զգայունությունն ապահովելու նպատակով պետական և մասնավոր հատվածների, միջազգային դոնոր կազմակերպությունների, ֆինանսական ինստիտուտների, ինչպես նաև հետազոտական ու գիտական շրջանակների միջև ստեղծվում է կայուն գործընկերություն, որը թույլ է տալիս մշակել գիտելիքահեն և փաստահեն քաղաքականություններ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ինչպես արդեն նշվել է, գենդերային զգայուն բյուջետավորումը ենթադրում է բազմապիսի գործողությունների իրականացում, որը ներառում է հետազոտությունը, մշտադիտարկումը, վերապատրաստումները, տեղեկատվության և տվյալների հավաքագրումը, վերլուծությունն ու բուն քաղաքականության մշակումը (Quinn, 2013; Sharp, 2003; Elson, 2002): Զարգացող երկրներում այս գործողությունները դատապարտվում են անհաջողության, եթե չկա պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների, ֆինանսական ինստիտուտների և գիտահետազոտական շրջանակների արդյունավետ համագործակցություն: Լինելով օրենք՝ բյուջեն ենթադրում է խիստ ընթացակարգեր, որոնք հնարավոր է արդյունավետ կազմակերպել միայն նշված դերակատարների ակտիվ մասնակցությամբ:

Բյուջեի նախագծման, ստուգման, հաստատման և իրականացման փուլերի գենդերային զգայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել մի շարք նախապայմաններ: Ընդ որում, կարևոր են թե՛ օրենսդրական բարեփոխումները, թե՛ կարողությունների զարգացումը: Գրականության մեջ (Downes et al., 2016; Baurciulu et al., 2016; Sharp, 2003) առանձնացվում են հետևյալ պայմանները.

- Ընթացակարգային և *օրենսդրական այնպիսի միջավայրի* առկայություն, որը կարող է խթանել գենդերային զգայուն բյուջետավորման իրականացումը թե՛ որպես քաղաքական պահանջ, թե՛ որպես հասարակական նախաձեռնություն:
- Գենդերային հավասարության համալիր մոտեցման ներառումը բյուջետավորման գործընթացում պահանջում է հաշվի առնել *բոլոր մարմինների և գերատեսչությունների յուրահատկություններն ու առկա ընթացակարգերը*:
- *Հանրային սեկտորի տնտեսական և ֆինանսական արդյունավետ կառավարում*, որի հիմնական նպատակը քաղաքական գործիչներին և պետական պաշտոնյաներին հանրային ֆինանսների, ռեսուրսների բաշխման և քաղաքական առաջնահերթությունների մասին ուսումնասիրությունների վրա հիմնված տեղեկատվության տրամադրումն է: Սա օգնում է հատուկ ծրագրեր

նախագծել: Պետք է հաշվի առնել, որ գենդերային հավասարության ազգային նպատակները կարող են դառնալ հատուկ և ճշգրիտ հարկային քաղաքականություններ կամ հիմք դառնալ պետական ծախսի կառուցվածքի փոփոխության համար միայն ազգային բյուջեի շնորհիվ:

- *Տնտեսական և սոցիալական քաղաքականությունների և պետական ծրագրերի համար տեղեկատվական բազայի ստեղծում:* Մրա հիմնական նպատակը հասարակության մեջ առկա սոցիալական և տնտեսական խնդիրների լուծման համար մշակվող քաղաքականությունների նախագծման համար անհրաժեշտ գենդերային զգայուն բաղադրիչով տեղեկատվության հավաքագրումն է, որը կօգնի նախ վեր հանել խնդիրների գենդերային ասպեկտը, ապա հիմք կստեղծի թիրախավորված և արդյունավետ որոշումների կայացման համար:
- *Մեռով տարբերակված պետական վիճակագրություն:* Գենդերային զգայուն բյուջետավորումը չի կարող իրականացվել, եթե վիճակագրությունը սեռով պայմանավորված տարբերություններ վեր հանելու հնարավորություն չունի: Տնտեսական քաղաքականության խնդիրներն ու նպատակները հաճախ ներառում են քանակական տվյալներ և եզրույթներ, ինչպիսիք են, օրինակ, պետական ծախսի առավելագույն չափը, պետական սեկտորի խնայողությունները, զբաղվածության և գործազրկության ցուցանիշները: Որակական կարծիքներ կարող են հնչեցվել միայն այն դեպքում, երբ պաշտոնական վիճակագրությունը ուղղակի կամ անուղղակի արտացոլում է մարդկանց կյանքը՝ հավաքագրելով և ներկայացնելով գենդերային տարբերություններով պայմանավորված կարիքների բազմազանությունը: Այս տեսակ վիճակագրության օգտագործումը որոշումների կայացման գործընթացում անչափ կարևոր է կայուն սոցիալական և տնտեսական զարգացում ապահովելու տեսանկյունից:

Ի լրումն նշված հիմնական նախապայմանների՝ գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման և իրականացման համար անչափ կարևոր է ապակենտրոնացված հանրային կառավարման առկայությունը, հանրային ֆինանսների կառավարման այնպիսի եղանակը, որը կկենտրոնանա խնդիրների և արդյունքների վրա, ոչ թե ներդրվող միջոցների: Անհրաժեշտ է նաև արդյունավետ հաղորդակցության համակարգ, որը կապահովի բյուջետավորման գործընթացի բոլոր մասնակիցների միջև տեղեկատվության շրջանառումը:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՒԼԵՐ

Գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման վերաբերյալ գրականության մեջ ընդհանրացված մեխանիզմներ չկան, հատկապես կարևորվում է, որ յուրաքանչյուր պետություն կարողանա ընտրել և կիրառել այն մեխանիզմները, որոնք լավագույնս կհամապատասխանեն տվյալ երկրի քաղաքական, սոցիալական և տնտեսական իրավիճակին: Այնուամենայնիվ, առանձնացվում են (Baurciusu et al., 2016; Austen et al., 2013) գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման հետևյալ փուլերը:

Փուլ 1

Նախ անհրաժեշտ է իրականացնել բյուջետային բոլոր գործողությունների գենդերային զգայուն վերլուծություն, որը թույլ կտա հասկանալ բյուջեի տարբեր ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա: Տվյալների համակարգերի և բազաների ստեղծումն ու շարունակական զարգացումը ոչ միայն խթանում է հավասարությունը (բյուջետային հատկացումներն ավելի լավ թիրախավորելու միջոցով), այլ նաև հանգեցնում է ֆինանսական միջոցների ավելի արդյունավետ և ծախսարդյունավետ օգտագործմանն ընդհանրապես: Գենդերային զգայուն խորը վերլուծությունը կարող է վեր հանել հետևյալը՝

- որքանով է բյուջեն բավարարում շահառուների կարիքները,
- որքանով են գենդերային տարբերություններն ազդում շահառուների բավարարվածության տարբեր մակարդակների վրա,
- մարտահրավերները և սահմանափակումները, որոնց բախվում է մեկ թիրախային սոցիալական խումբ, որին հասանելի չեն եղել հանրային ծառայությունները,
- որքանով է բյուջեն ազդել գենդերային անհավասարության վրա (նվազեցրել է այն, ավելի է խորացրել կամ միգուցե անհավասարության մակարդակը մնացել է նույնը),
- հայտարարված քաղաքականությունների (հատկապես գենդերային հավասարությանը վերաբերող ծրագրերի) և բյուջետային գործընթացի միջև առկա կապը,
- ինչու բյուջեն պիտի հաշվի առնի կանանց և տղամարդկանց կողմից իրականացվող չվճարվող կամ խնամակալային աշխատանքի տարբեր ցուցանիշները:

Փուլ 2


Երկրորդ փուլում հարկավոր է նախագծել պետական ծախսերն այնպես, որպեսզի երկրում գենդերային հավասարության ընդհանուր վիճակը բարելավվի: Երբ բյուջետային որոշումների կամ արդյունքային ցուցանիշների նախագծման համար օգտագործվում է գենդերային զգայուն վերլուծության մեթոդը, ապա հավանական է, որ պետության գենդերային ռազմավարության ծրագիրը թե՛ կֆինանսավորվի, թե՛ կիրականացվի: Միևնույն ժամանակ, սա նշանակում է, որ այլ գենդերային տարբերություններով պայմանավորված ցանկացած նոր հայտնաբերվող շեղում կդառնա վերահսկելի, քանի որ կտեղավորվի ընդհանուր տրամաբանության մեջ: Ավելին, եթե հետազոտություններով պարզ է դարձել, որ պետական բյուջեում առանձնացված միջոցներն ու պետության կողմից հայտարարված գենդերային քաղաքականությունները չեն խաչվում, ապա անհրաժեշտ է վերակազմակերպել պետական բյուջեն:

Փուլ 3

Առաջին երկու փուլերից հետո հարկ է համակարգված ձևով գենդերային խնդիրները ներառել բյուջետավորման բոլոր գործընթացներում: Այս փուլը կոմպլեքս մոտեցումներ է պահանջում: Գենդերային զգայուն բյուջետավորումը ոչ միայն ուշադրություն է դարձնում բյուջեի էությանը կամ տեքստին, այլ նաև բյուջետային որոշումների կայացման բոլոր փուլերին: Օրինակ՝ ինչպես են բյուջետային որոշումները

կայացվում, տեղեկատվական բազան ինչպիսին է, ովքեր են գործընթացում ներգրավված մասնակիցներն ու որոշում կայացնողները, ինչ ազդող որոշումներ են ընդունվում, ովքեր են այն մարդիկ, որոնք դուրս են մնացել գործընթացներից: Ըստ էության, պետական ծախսերի կառավարումը քաղաքական գործընթաց է, ոչ թե միայն տեխնիկական խնդիր: Հետևապես, որքան էլ որ անհրաժեշտ է գիտելիքներ ունենալ բյուջեի նախագծման կամ կատարման վերաբերյալ, այնուամենայնիվ, հատկապես կարևոր է բյուջետավորման գործընթացի վրա քաղաքական ազդեցությունը հասկանալը: Հենց այս է պատճառը, որ գրականության մեջ կոնսենսուս կա բյուջետավորման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ: Պատճառն այն է, որ քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը դրական ազդեցություն է ունենում պետության հաշվետվողականության և թափանցիկության վրա:

Հարկ է նշել, որ այս երեք հիմնական փուլերը ցիկլիկ են: Դրանց հաջորդականությունն ու հարաբերությունները ցուցադրված են Պատկեր 1-ում (Quinn, 2013):



Որոշ հեղինակներ (Anxo et al., 2011; Baurciulu et al., 2016; Rubin & Bartle, 2005) էլ առանձնացնում են բյուջետավորման տարբեր փուլերում ներառվող գործողությունների խումբ՝ որպես գենդերային զգայուն բյուջետավորման բաղկացուցիչ մաս: Փուլերն ու գործողությունները ներկայացվում են ստորև.

Փուլի անվանում	Գործողություններ
Բյուջեի նախագծում	<ul style="list-style-type: none"> Ապահովել, որ բյուջեի հատկացումները, որոնք օգտագործվելու են ծրագրերի կամ հատուկ գործողությունների իրականացման համար, բաշխվեն այնպես, որ տղամարդիկ և կանայք ունենան հավասար հնարավորություններ իրենց կարիքները բավարարելու գործում: Գնահատել եկամուտների հավաքագրման նոր

	<p>մեթոդների պոտենցիալ ազդեցությունը տղամարդկանց և կանանց տարբեր խմբերի վրա՝ հաշվի առնելով վերջիններիս վճարողունակությունը:</p> <ul style="list-style-type: none"> • Համեմատել բյուջետային ընթացիկ տարվա ցուցանիշները ճշգրտված գնահատումների և նախորդ տարվա իրական ծախսերի հետ՝ և կիրառելով ճշգրտող միջոցներ՝ հասնել ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված միջոցների ամբողջական օգտագործմանը:
<p>Բյուջեի ընդունում</p>	<ul style="list-style-type: none"> • Որևէ սեկտորում կամ նախարարությունում առկա միտումների, ինչպես նաև հատկացումների և ծախսերի մասնաբաժինների ուսումնասիրություն, որը թույլ կտա պարզել պետության առաջնահերթությունները: • Եկամուտների վերլուծություն՝ պարզելու դրանց (ներառյալ՝ եկամուտների աղբյուրների կամ դրամաշնորհների) ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա: • Միտումների և մասնակցության վերլուծություն՝ հասկանալու գրանցված փոփոխությունները:
<p>Բյուջեի կատարում</p>	<ul style="list-style-type: none"> • Բյուջետային միջոցների օգտագործման վերլուծություն, որը ցույց կտա՝ արդյոք միջոցներն օգտագործվել են համաձայն նախապես ծրագրվածի և ողջ քանակով, թե եղել են շեղումներ: • Իրականացված գործողությունների ծախսային վերլուծություն: • Շահառուների խմբերի վերլուծություն: • Բյուջեի նշանակված միջոցների վերլուծություն, որը թույլ կտա հասկանալու՝ արդյոք միջոցներն օգտագործվել են այն խմբերի կարիքների բավարարման կամ իրավիճակի բարելավման համար, ում համար, որ նշանակված և առանձնացված են եղել:
<p>Բյուջեի կատարման գնահատում</p>	<ul style="list-style-type: none"> • Պետական բյուջեից ֆինանսավորված բոլոր գործողությունների և ծրագրերի ունեցած վերջնական արդյունքների և ազդեցության գնահատում: • Պետական բյուջեի ֆինանսական միջոցների օգտագործմամբ պայմանավորված սպասվող, իրական և անսպասելի արդյունքների վերլուծություն: • Բյուջեի ֆինանսական միջոցների արդյունավետության գնահատում, որը հնարավորություն կտա հասկանալ, թե որ նպատակներն են կատարվել: • Պետական ծախսերով պայմանավորված փոփոխությունների գնահատում, որը ցույց է տալիս ծախսի ազդեցության աստիճանը:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՉԳԱՅՈՒՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ ՈՒ ՄՈՂԵԼՆԵՐԸ

Բազմաթիվ վերլուծական և տեսական շրջանակներ կան, որոնք, անկախ տարբերություններից, տարբեր երկրների համար գենդերային բյուջետավորման ներդրման հիմք են դարձել: Դրանցից հիմնականում առանձնացվում են Ռոնդա Շարփի (Sharp, 2003) կողմից մշակված ծախսերի եռակողմ կատեգորիզացիան, Հարավաֆրիկյան Հանրապետության կողմից մշակված չորս կամ հինգ քայլի մոտեցումը (Elson, 2002) և Ազգերի բրիտանական համագործակցության (Commonwealth) քարտուղարության կողմից մշակված գործիքակազմը (qtd. In Quinn, 2013; Elson, 1998):

Ինչպես ակնհայտ է ձևակերպումից, առաջին մոտեցումը կենտրոնանում է ծախսային ասպեկտի վրա, սակայն բյուջետավորման գործընթացը շատ լայն է և ներառում է նաև պետության եկամուտները, ուստի միայն ծախսային վերլուծությամբ համապարփակ մոդելի առաջադրումը բարդ գործընթաց է: Երկրորդ մոտեցումը հիմնված է Դայան Էլսոնի (Elson, 2001) կողմից առաջադրված քայլերի հաջորդականության վրա, որը ներառում է երկրում կանանց և տղամարդկանց իրավիճակային վերլուծությունը, պետական քաղաքականության և առկա իրավիճակի կապի վերաբերյալ գնահատումը, գենդերային տեսանկյունից բյուջետային հատկացումների գնահատումը (արդյոք բյուջետային հատկացումները թույլ տալիս են նախագծել գենդերային զգայուն քաղաքականություններ, թե ոչ), բյուջեի հատկացումների, ծախսերի, ինչպես նաև ծրագրերի և քաղաքականությունների կատարման մշտադիտարկումը: Ընդ որում, այս քայլերը նախաձեռնվում են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից և կարող են ընդլայնվել՝ հաշվի առնելով ծախսերի կարճաժամկետ կամ երկարաժամկետ ազդեցությունները: Ակնհայտ է, որ քաղաքացիական հասարակության կողմից զարգացող երկրներում այս մոդելի կիրառումը երկրորդ քայլից դժվար կարող է առաջ գնալ: Մյուս կողմից, այն ևս հիմնված է միայն ծախսային վերլուծության վրա:

Ազգերի բրիտանական համագործակցության (Commonwealth) քարտուղարությունն առաջարկում է յոթ հիմնական գործիքներ (qtd. in Quinn, 2013), որոնց կիրառումը հնարավորություն կտա արդյունավետ ներդրել գենդերային զգայուն բյուջետավորումը: Ընդ որում, այս գործիքները օգտագործվել են մի շարք եվրոպական երկրներում և հաջողություն գրանցել:

Առաջին գործիքը *բյուջետային առաջնահերթությունների և հանրային ծառայությունների շահառուների սեռով տարբերակված գնահատումն* է: Այն կատարվում է հանրային կարծիքի ուսումնասիրման և վերլուծության միջոցով: Դրանք մատնանշում են, թե որքանով են պետական ծրագրերը արտացոլում մարդկանց առաջնահերթություններն ու բավարարում նրանց կարիքները: Վերլուծական այս գործիքը հնարավորություն է տալիս նաև տեղեկատվություն ստանալ հանրային ծառայությունների շահառուների իրական խմբի մասին: Երկրորդ գործիքը *պետական ծախսի բաշխվածության սեռով տարբերակված վերլուծությունն* է: Ի տարբերություն նախորդի՝ այս գործիքը քանակական է և չափում է հանրային ծառայության միավոր արժեքը, և թե ինչպես է պետության ծախսը բաշխվում կանանց և տղամարդկանց միջև՝ հաշվի առնելով վերջիններիս՝ այդ ծառայությունից օգտվելու հնարավորությունը: Արդյունքում, հաշվարկվում է ծառայության միավոր արժեքը և ցույց տրվում, թե քանի կին և տղամարդ է օգտվում դրանից: Երրորդ գործիքը

*քաղաքականության՝ գենդերի տեսանկյունից իրազեկ գնահատումն է: Այն օգտագործվում է կանանց և տղամարդկանց վրա բյուջետային գործիքների կիրառման ազդեցությունը հասկանալու համար: Հենց այս գործիքի միջոցով հարցականի տակ է դրվում բյուջեի՝ որպես գենդերային չեզոք քաղաքականության մտայնությունը: Փոխարենը ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, թե այս կամ այն ծրագիրը որքանով է ազդում գենդերային հավասարության վրա: Չորրորդ գործիքը *գենդերային տեսանկյունից իրազեկ բյուջետային հայտն է: Այն ցույց է տալիս, թե պետական բյուջեի ծախսային մասը որպես ամբողջություն և ըստ նախարարությունների ինչպես է հասցեագրում գենդերային անհավասարությունը: Հաջորդ գործիքը *Ժամանակի օգտագործման վրա բյուջեի ազդեցության՝ գենդերային տեսանկյունից իրազեկ վերլուծությունն է, որի նպատակը պետական բյուջեի և չվճարվող աշխատանքի կապի վեր հանումն է: Այլ կերպ ասած, այս գործիքի նպատակը չվճարվող կամ տնային աշխատանքի չափումն է և սեռով տարբերակված արդյունքների ներկայացումը, որից հետո բյուջետային գործընթացը սկսելիս պետք է նախագծվեն այնպիսի ծրագրեր, որոնք կօգնեն կրճատել տան չվճարվող աշխատանքի ժամանակն ու ուղղել սոցիալական այլ գործողությունների կատարմանը: Վեցերորդ գործիքը *գենդերային զգայուն միջնաժամկետ ծախսային ծրագիրն (ՄԺԾԾ) է: Հատկանշական է, որ ՄԺԾԾ-ն գենդերային տեսանկյունից զգայուն պետք է լինի երկու առումով՝ հաշվի առնելով թե՛ նախատեսվող ծրագրերի շահառուների սեռային տարբերության վրա հիմնված կազմը, թե՛ հատկացվող ֆինանսական միջոցների չափը: Վերջին գործիքը *պետական եկամուտների բաշվածության՝ սեռով տարբերակված վերլուծությունն է, որը ցույց է տալիս թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի հարկերի ազդեցությունը, ինչպես նաև հավելյալ տեղեկատվություն է տալիս այն մասին, թե որքան հարկ են վճարում տնային տնտեսությունների տարբեր կատեգորիաների կամ անհատների կողմից:*****

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս աշխատանքի նպատակը Հայաստանում գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման համար լավագույն գործիքակազմի ներկայացումն է: Տեսական և վերլուծական մասը հիմնվում է Ազգերի բրիտանական համագործակցության (Commonwealth) քարտուղարության կողմից մշակված գործիքակազմի վրա: Քանի որ նախորդ գլխում ներկայացված մոդելներից երկուսը ակնհայտ սահմանափակումներ ունեին, այս ուսումնասիրության համար օգտագործվել է ներկայացված երրորդ մոտեցումը, որը ևս հիմնված է Դայան Էլսոնի առաջարկած քայլերի վրա, սակայն ավելի մանրամասն և համակողմանի է. հաշվի է առնում ոչ միայն ծախսերը, այլ նաև եկամուտները, իսկ առաջարկվող քայլերի հաջորդականությունը ենթադրում է խորը աշխատանք ոչ միայն քաղաքացիական հասարակության, այլ նաև պետական մարմինների կողմից:

Օգտագործելով Ազգերի բրիտանական համագործակցության կողմից մշակված մոդելը՝ ուսումնասիրվել է միջազգային փորձը և կատարվել Հայաստանի իրավիճակային վերլուծություն: Միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով ընտրվել են Արևելյան գործընկերության երկրներից Մոլդովան և Ուկրաինան. մյուս անդամ պետությունները հաշվի չեն առնվել, քանի որ չունեն համապատասխան քաղաքականություն կամ նախաձեռնություններ: Դիտարկելով Հայաստանի հետ

համադրելիությունը՝ ընտրանքում ավելացվել են նաև մերձբայթյան երկրները՝ Էստոնիան, Լատվիան և Լիտվան: Հիմք ընդունելով գենդերային զգայուն բյուջետավորման երկու հիմնական մոտեցումները՝ պետության կողմից նախաձեռնվող և քաղաքացիական հասարակության կողմից նախաձեռնվող, ներառվել են նաև Շվեդիան և Ավստրիան: Ընտրանքը ընդլայնելու և հաջողված փորձն ուսումնասիրելու նպատակով Ազգերի բրիտանական համագործակցության կողմից մշակված տարբեր գործիքներ հաջողությամբ կիրառած պետություններից Բելգիան և Նիդերլանդները ևս ներառվել են ուսումնասիրվող երկրների ցանկում:

Ընտրանքում ներառված երկրների իրավիճակային վերլուծության համար օգտագործվել են հասանելի իրավական փաստաթղթերը, Եվրոպական միության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) տվյալները գենդերային խզվածքի վերաբերյալ, ինչպես նաև Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի կողմից մշակված Գենդերային հավասարության համաթիվը:

Իրավիճակային վերլուծությունից զատ, միջազգային զեկույցների օգտագործմամբ գնահատվել է նաև բյուջետային գործընթացի թափանցիկությունն ու ծախսարդյունավետությունը: Այս ոլորտում հայտնի են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված երկու զեկույցները (Report On The Observance Of Standards And Codes (ROSC) և Fiscal Transparency Evaluation), որոնց օգնությամբ գնահատվում է երկրների բյուջետային գործընթացը: Համաշխարհային բանկի, Եվրոպական հանձնաժողովի, Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված և նախաձեռնած Հանրային ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության ծրագիրը (PEFA) տրամադրում է քանակական ցուցանիշներ, որոնցով հնարավոր է երկրների հանրային ֆինանսների արդյունավետության գնահատումը: Մյուս կազմակերպությունը Բյուջեի միջազգային գործընկերությունն (International Budget Partnership) է, որը հրապարակում է Բաց բյուջեի համաթիվը (Open Budget Index): Չնայած բազմազանությանը՝ բոլոր զեկույցներն ու համաթիվերը ունեն սահմանափակումներ, քանի որ ուսումնասիրության առարկա հանդիսացող երկրների մեծ մասն ընդգրկված չէ զեկույցներում: Ավելին, նշված զեկույցներից միայն Բյուջեի միջազգային գործընկերության կողմից են հրապարակվել համեմատաբար նոր թվային տվյալներ (վերջին զեկույցը հրապարակվել է 2017 թվականին): Ուստի, վերլուծության իրականացման համար օգտագործվել են հասանելի տվյալները:

Հայաստանում իրավիճակը գնահատվել է հետևյալ փոփոխականների օգտագործմամբ՝

- կանանց և տղամարդկանց մասնակցությունը քաղաքականության մշակմանն ու որոշումների կայացմանը (կանանց թիվը գործադիր և օրենսդիր մարմիններում),
- կանանց մասնակցությունն աշխատաշուկայում,
- աշխատավարձի գենդերային խզվածքը,
- սեռով տարբերակված աղքատության շեմը,
- կրթության հասանելիությունը,
- բժշկական ծառայությունների հասանելիությունը:

Վիճակակագրական տվյալները վերցվել են Ազգային վիճակագրական կոմիտեի զեկույցներից: Հայաստանում իրավիճակի առավել համապարփակ վերլուծության,

ինչպես նաև գենդերային զգայուն բյուջետավորման լավագույն մոդելի սահմանման համար ուսումնասիրվել են առնչվող իրավական փաստաթղթերը և իրականացվել փորձագիտական հարցազրույցներ միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և պետական մարմինների ներկայացուցիչների հետ:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Իրավական փաստաթղթերի վերլուծություն

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գենդերային անհավասարության դեմ պայքարի միատեսակ միջոցներ աշխարհում չկան: Եվրոպական փորձը փաստում է, որ գենդերային հավասարության խթանման արդյունավետ մեխանիզմը առանձին պատասխանատու մարմինների կամ հատուկ վարչությունների ստեղծումն է: Ընտրանքում ներառված երկրներն ունեն գենդերային հարցերով հատուկ ինստիտուտներ (Բելգիա), սոցիալական ապահովման պատասխանատու նախարարությունների կազմում վարչություններ կամ բաժիններ (Լիտվա, Լատվիա, Շվեդիա), կրթության համար պատասխանատու նախարարության կազմում ֆունկցիոնալ ստորաբաժանումներ (Ավստրիա, Նիդերլանդներ): Բացի թվարկվածներից, կան նաև գենդերային հետազոտությունների կենտրոններ, գենդերային հավասարության խորհուրդներ, գենդերային և հասանելիության հարցերով մարզային գրասենյակներ և գործակալություններ:

Հատկանշական է նաև, որ Ավստրիայում գենդերային հարցերով զբաղվում է Կրթության և կանանց հարցերով նախարարությունը, իսկ կառավարության ներսում՝ այլ նախարարությունների մասնակցությամբ, գործում է գենդերային մեյնսթրիմինգի հարցերով աշխատանքային խումբ, որի հիմնական գործառնությունը գենդերային մեյնսթրիմինգի ներմուծումն է քաղաքականության տարբեր ոլորտներ: Հենց այս աշխատանքային խմբի շնորհիվ է երկրում ֆեդերալ մակարդակով իրականացվում գենդերային զգայուն բյուջետավորում:

Շվեդիայի դեպքում, չնայած որ գենդերային մեյնսթրիմինգի բաղադրիչը քաղաքականության մեջ ներդնելու և զարգացնելու հարցերով զբաղվում է սոցիալական ապահովման և առողջապահության հարցերով պատասխանատու նախարարությունը, յուրաքանչյուր նախարարությանը կից գործում է գենդերային հավասարության հարցերով համակարգող: Հետաքրքրական է, որ Բելգիայում բացի ֆեդերալ մակարդակում գործող ինստիտուտից, ինքնավար շրջաններում գործում են «հավասար հնարավորությունների միավորներ», որոնց խնդիրը տեղական մակարդակում խնդիրների վերհանումն ու լուծումն է: Թվարկված երկրներից Գենդերային հարցերով եվրոպական ինստիտուտը ամենարդյունավետ կառավարման համակարգ ունեցող պետություն է դիտարկվում Ավստրիային:

Նշված երկրների փորձի ուսումնասիրությունը փաստում է նաև, որ առանձին գենդերային զգայուն բյուջետավորման քաղաքականության իրականացումը հնարավոր չէ առանց ուղեկցող օրենսդրական կարգավորումների առկայության: Ընդ որում, կարևոր են ոչ միայն սեռով պայմանավորված խտրականության դեմ պայքարող

օրենքները, այլ նաև քաղաքականությունների գենդերային ազդեցության գնահատականը սահմանող օրենսդրական ակտերը: Բելգիայում, օրինակ, 2007 թվականին ընդունվել է Գենդերային մեյնսթրիմինգի մասին օրենք, որով սահմանվել է քաղաքականություններում գենդերային զգայունության գնահատման պարտադիր պահանջ: Ավելին, ի շարունակություն նույն օրենքի և 2010թ. Թագավորական որոշման, օրենքով սահմանվել է նաև գենդերային զգայուն բյուջետավորման անհրաժեշտությունը: Ըստ նշված իրավական փաստաթղթի՝ Ֆեդերալ մակարդակում պետական մարմինները պարտավոր են գնահատել և վերլուծել բյուջեն գենդերային ազդեցության տեսանկյունից:

Ավստրիայի փորձը յուրօրինակ է, քանի որ այն նշվածներից միակ պետությունն է, որ գենդերային մեյնսթրիմինգը և բյուջետավորումը ներառել է երկրի բարձրագույն օրենքում՝ Սահմանադրության մեջ (Հոդված 7): Դրանից զատ, Նախարարների խորհրդի կողմից ընդունվել են նաև 5 որոշումներ (2000թ., 2002թ., 2004թ., 2008թ., 2011թ.), որոնցից վերջին երկուսը վերաբերում են գենդերային զգայուն բյուջետավորման ներդրմանը: Ի լրումն, Կրթության և կանանց հարցերով նախարարությունը յուրաքանչյուր տարի մշակում և ներկայացնում է գենդերային համաթիվ, որն արտացոլում է, թե ինչպիսին են երկրում գենդերային տարբերությունների և անհավասարության պատկերն ու կառուցվածքը: Պատահական չէ, որ Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտը առկա օրենքների կիրարկման տեսանկյունից Ավստրիային գնահատում է 10-ից 7,5 միավորով, որը թե՛ ընտրանքի մյուս երկրների ցուցանիշները, թե՛ ԵՄ միջինը գերազանցում է մոտ երկու անգամ:

Շվեդիայում գենդերային մեյնսթրիմինգը դիտարկվում է որպես գենդերային հավասարության հասնելու լավագույն միջոց: 2009 թվականին այդ նպատակով ստեղծվել է առցանց հարթակ¹: Այս հարթակը գենդերային հավասարության ազգային ռեսուրսային կենտրոնն է Շվեդիայում և առաջարկում է գենդերային զգայունության բաղադրիչի ներդրման հստակ գործիքներ: Շվեդիայում գենդերային մեյնսթրիմինգի մասին 2006 թվականին ընդունվել է Կառավարության որոշում, որով սահմանվում էին գենդերային հավասարության ոլորտի հիմնական առաջնահերթությունները: Ի շարունակություն այդ որոշման՝ 2007 թվականին ստեղծվել է Ինտեգրման և գենդերային հավասարության նախարարությունը, որը հետագայում լուծարվեց, իսկ գենդերային հավասարության գործառնությունները վերապահվեցին Առողջապահության և սոցիալական հարցերի նախարարությանը: 2011 թվականից Շվեդիայի կառավարությունը գենդերային մեյնսթրիմինգը նոր թափով զարգացնելու նպատակով մշակել է գենդերային մեյնսթրիմինգի ռազմավարություն բոլոր նախարարությունների մակարդակով: Սա ենթադրում է նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային բաղադրիչների ներմուծում:

Նիդերլանդներում հավասար հնարավորությունների և խտրականության դեմ պայքարի առանձին օրենքներ չկան: Երկուսն էլ ներառված են «Հավասար վարմունքի ակտում»: Դրա կիրարկման պատասխանատու մարմինը Հավասար վարմունքի հանձնաժողովն է (Equal Treatment Commission): Նիդերլանդները գենդերային մեյնսթրիմինգի վերաբերյալ ընդունել է թվով 35 իրավական ակտ: Բոլոր փաստաթղթերի կիրարկման համար կարևորվում են պաշտոնյաների և քաղաքական

¹ Տես <https://www.includegender.org>

գործիչների պատրաստակամությունը, ճշգրիտ և հստակ նպատակներով ու խնդիրներով քաղաքականությունների մշակումը, պարտականությունների բաշխումը, գենդերային տվյալների և գիտելիքների առկայությունը, գենդերային հավասարության խթանումը տարբեր գործիքների, այդ թվում՝ բյուջետավորման միջոցով:

Ի տարբերություն Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների՝ Մերձբալթյան երկրները չունեն համակողմանի իրավական ակտեր: Գենդերային հավասարությունը խթանող հիմնական փաստաթղթերը ռազմավարություններն են, գործողությունների ծրագրերն ու գենդերային հավասարության ազգային նպատակների ծրագրերը:

Ուկրաինան և Մոլդովան միջազգային պարտավորությունների շրջանակով և օրենսդրական կարգավորումներով նման են Հայաստանին: Այս պետությունները վավերացրել են ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Պեկինյան հռչակագիրը և ունեն առանձին ասոցացման համաձայնագրեր Եվրոպական միության հետ, որով պարտավորվել են ներդնել գենդերային զգայուն բյուջետավորման գործիքակազմ: Երկու երկրներն էլ ունեն կրթության, առողջապահության և աշխատաշուկայի ոլորտներում իրականացրած գենդերային բյուջետավորման նախաձեռնություններ, սակայն Մոլդովան այս պահին Շվեդիայի կառավարության օգնությամբ փորձարկում է նաև բյուջետավորման համալիր գործիքակազմի կիրառումը:

Գենդերային զգայուն բյուջետավորման գործիքների վերլուծություն

Ազգերի բրիտանական համագործակցության կողմից մշակված գործիքակազմի օգտագործումը ընտրված պետությունների կողմից ներկայացված է Աղյուսակ 1-ում:

<i>Երկիր</i>	<i>Բյուջետային առաջնահերթությունների և հանրային ծառայությունների չափառումների սեռով տարբերակված գնահատում</i>	<i>Բյուջեի բաշխվածության (ծախս և եկամուտ)՝ սեռով տարբերակված վերլուծություն</i>	<i>Քաղաքականության գենդերի տեսանկյունից իրազեկ գնահատում</i>	<i>Գենդերային տեսանկյունից իրազեկ բյուջետային հայտ</i>	<i>Ժամանակի օգտագործման վրա բյուջեի ազդեցություն</i>	<i>Գենդերային զգայուն ՄԺԾԾ</i>
Ավստրիա	+	+	+	+	+	+
Բելգիա	+		+	+	+	+
Էստոնիա					+	
Լատվիա					+	
Լիտվա					+	
Մոլդովա					+	+
Նիդերլանդներ	+	+	+		+	+
Շվեդիա	+		+	+	+	
Ուկրաինա	+					+
Հայաստան	-	-	-	-	-	-

Աղյուսակ 1. Միջազգային փորձի ներկայացում

Ինչպես պարզ է դառնում աղյուսակից, ընտրված երկրներից միայն Ավստրիան է օգտագործում Ազգերի բրիտանական կազմակերպության կողմից մշակված ողջ գործիքակազմը: Պատահական չէ, որ Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտը Ավստրիայի կառավարման համակարգի արդյունավետությունը գենդերային հարցերին պատասխանելու տեսանկյունից գնահատում է 5-ից 3,5 միավոր, որը ընտրանքում առկա բոլոր երկրներին և ԵՄ միջինին գերազանցում է 1 միավորով: Բելգիան և Նիդերլանդները, չնայած գենդերային զգայուն բյուջետավորման հաջող փորձին, ունեն 4 միավոր, քանի որ չեն կիրառում համապատասխանաբար բյուջեի բաշխվածության՝ սեռով տարբերակված վերլուծության և գենդերային տեսանկյունից իրազեկ բյուջետային հայտի գործիքները: Այնուամենայնիվ, այս երկրների գործիքների ընտրությունը պայմանավորված է որդեգրած մոտեցումներով: Բելգիան, մասնավորապես, կիրառել է գենդերային բյուջետավորման համակարգային մոտեցումը, որը չի ենթադրում առանձին ծրագրերի համար բյուջետային ծախսերի վերլուծություն, փոխարենը, վերլուծությունը կատարվում է մակրո մակարդակում: Նիդերլանդների մոտեցումը ևս նման է սրան, քանի որ գենդերային բաղադրիչը ներդրվում է ողջ բյուջեի մեջ, առանձին պետական մարմիններ չեն ներկայացնում հատուկ տարբերակված բյուջետային հայտեր:

Գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման Շվեդիայի փորձն էապես տարբերվում է բոլոր ներկայացված երկրներից: Շվեդիան օգտագործում է գենդերային բաղադրիչի ներդրման 4R-ի մոդելը: Մոդելի անվանումն առաջացել է Representation (ներկայացվածություն), Resources (ռեսուրսներ), Reality (իրականություն) և Reaction (արձագանք) բառերի սկզբնատառերի համադրությունից: Առաջին R-ը նշանակում է հաշվարկել և ուշադրություն դարձնել, թե քանի կին և տղամարդ է մասնակցում որոշումների կայացման գործընթացին: Երկրորդը ենթադրում է առկա ռեսուրսների բաշխվածության ուսումնասիրություն: Երրորդ բաղադրիչի խնդիրը երկրում առկա իրականության կամ այն պայմանների վերհանումն է, որոնք դրդում են գենդերային անհավասարության: Վերջին R-ը առաջարկում է հաշվի առնել նախորդ երեք բաղադրիչների վերլուծությունը և մշակել արձագանքման համապատասխան մեխանիզմներ:

4R-ի մոտեցման կիրառումը Շվեդիային թույլ է տվել չօգտագործել բյուջեի բաշխվածության սեռով տարբերակված վերլուծության և Գենդերային զգայուն ՄԺԾԾ-ի գործիքները, սակայն դրա փոխարեն Շվեդիայում յուրաքանչյուր տարի թե՛ ողջ կառավարության, և թե՛ առանձին նախարարությունների կողմից սահմանվում են գենդերային հավասարության նպատակներ, որոնք արտացոլվում են բյուջետային գործընթացում: Գենդերային զգայուն ցուցանիշների օգնությամբ և ամենամյա աուդիտների և ստուգումների արդյունքում պարզ է դառնում, թե երկիրը որքանով է հասել դրված նպատակներին կամ արդյունքներին:

Անդրադառնալով հետխորհրդային երկրներին՝ կարող ենք ասել, որ դրանք գենդերային բյուջետավորման գործիքների կիրառմամբ ամենապասիվ դիրքն ունեն: Սակայն, հարկ է նշել, որ մերձբաղթյան երկրները, անկախ գենդերային զգայուն բյուջետավորման համալիր մոտեցման բացակայությունից, գենդերային հավասարության ազգային ծրագրերի և նպատակների արդյունքում իրականացրել են այնպիսի քաղաքականություններ, որոնք ենթադրում են միջոցների վերաբաշխում, ինչպես նաև դրական ազդեցություն են ունենում արդյունավետության բարձրացման և գենդերային հավասարության խթանման վրա: Սա ապացուցվում է նաև այս երկրների

ցուցանիշներով և միջազգային զեկույցներում տրված գնահատականով (Գենդերային համաշխարհային խզվածքի զեկույցում Լատվիան 149 երկրների ցանկում 17-րդն է, Լիտվան՝ 24-րդը, իսկ Էստոնիան՝ 33-րդը):

Հետաքրքրական է նաև Մոլդովայի և Ուկրաինայի օրինակը, որոնք ավելի համադրելի են Հայաստանի հետ: Հատկանշական է, որ այս երկրները սկսել են ներդնել զենդերային զգայուն բյուջետավորումը Շվեդիայի աջակցությամբ: Ընդ որում, Մոլդովան որդեգրել է Բելգիայի՝ ավելի համապարփակ և ընդհանուր մոտեցումը, իսկ Ուկրաինան կիրառում է Ավստրիայի՝ սեկտորներով տարբերակված մոդելը: Եթե Մոլդովայում մակրո մակարդակում արդեն իսկ մշակվել են զենդերային մեյնսթրիմինգի կիրառման տարբեր մեխանիզմներ, ապա Ուկրաինայում դրանք հիմնականում զենդերային բյուջետավորման նախաձեռնություններ են, որոնք ուղղված են տարբեր քաղաքներում կրթության, աշխատաշուկայի կամ բուժօգնության հասանելիության բարձրացմանը: Մոլդովան սկսել է կիրառել զենդերային զգայուն բյուջետավորման բաղադրիչներ և գործիքներ 2014 թվականից, իսկ Ուկրաինան՝ 2012-ից: Քանի որ երկու երկրներում էլ բյուջետավորման գործիքները դեռևս ներդրման փուլում են, դժվար է ցույց տալ այդ գործիքների ազդեցությունը պետական վիճակագրության ցուցանիշների փոփոխության վրա:

Վիճակագրական տվյալների վերլուծություն

Ընտրանքում ընդգրկված և զենդերային զգայուն համակողմանի բյուջետավորում իրականացնող բոլոր երկրները, ըստ Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի կողմից մշակված զենդերային հավասարության համաթվի, ունեն բարձր դիրք: Աղյուսակ 2-ում պատկերված են զենդերային զգայուն


	2005	2015
Ավստրիա	59.5	63.3
Բելգիա	66	70.5
Նիդերլանդներ	67.8	79.2
Շվեդիա	78.8	82.6

Աղյուսակ 2, երկրներն ըստ զենդերային հավասարության ինդեքսի

բյուջետավորում իրականացրած երկրների ցուցանիշները: Հարկ է նշել, որ Ավստրիան բյուջետավորման առաջին նախաձեռնությունները սկսել է 2005 թվականին, իսկ քաղաքականությունն ընդունել 2009թ.՝ ելակետի համեմատ գրանցելով 3.8 թվային աճ: Բելգիան նախաձեռնություններ սկսել է իրականացնել 2006թ., Նիդերլանդները՝ 2001թ., իսկ Շվեդիան՝ 2003-2004 թվականներից: Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ բոլոր 4 երկրները ելակետի համեմատությամբ զգալի աճ են գրանցել: Հատկանշական է նաև, որ Էստոնիան, Լատվիան և Լիտվան, որոնք չունեն զենդերային զգայուն բյուջետավորման համակողմանի քաղաքականություններ, այս համաթվի ցուցանիշներով ունեցել են միջինում 56-57 միավոր, որը ԵՄ միջին արդյունքից ցածր է 10 միավորով:

Պատկեր 1-ը ցույց է տալիս վարձատրության զենդերային խզվածքը Բելգիայում, Ավստրիայում և Նիդերլանդներում 2010-2017 թվականներին: Ընտրված ժամանակահատվածը պատահական չէ, քանի որ Բելգիայում և Ավստրիայում զենդերային զգայուն բյուջետավորման համալիր գործընթացը մեկնարկել է 2010 թվականին, իսկ Նիդերլանդներում 2001թ.: Ակնհայտ է, որ զենդերային խզվածքը


անկում է ապրում: Մասնավորապես, 2010թ. այն Ավստրիայում կազմել է 24%, Բելգիայում՝ 10.2%, իսկ Նիդերլանդներում՝ 18.7%: Ցուցանիշը 2017թ. անկում է ապրել՝ դառնալով համապատասխանաբար 19.9%, 6% և 15.2%²:



Պատկեր 1, Վարձատրության գենդերային խզվածք, 2006-2017թթ

Շվեդիայի վերաբերյալ տվյալները Եվրամիության վիճակագրական ծառայությունում բացակայում են 2003-2005 թվականների համար, ուստի վերլուծության համար օգտագործվել է ՏՀՀԿ ցուցանիշը, որը ևս նույն պատկերն է արտացոլել: 2003 թվականին, ըստ ՏՀՀԿ տվյալների, աշխատավարձի գենդերային խզվածքը Շվեդիայում կազմել է 11.5% իսկ 2017թ.՝ իջել մինչև 7.3%³:

Պատկեր 2-ը արտացոլում է հակառակ իրավիճակը: Այստեղ նշված են այն



Պատկեր 2, Վարձատրության գենդերային խզվածք 2006-2017

երկրները, որոնք չունեն գենդերային զգայուն բյուջետավորման համակողմանի քաղաքականություն: Մերձբալթյան երկրներում իրավիճակի վերլուծության համար օգտագործվել է Եվրոպական միության վիճակագրության ծառայության, իսկ Մոլդովայում՝ պետական վիճակագրության տվյալները⁴: Պատկեր 2-ը ցույց է տալիս,

² Տվյալները վերցված են Եվրամիության վիճակագրական ծառայությունից (Եվրոստատ), հասանելի են՝ https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Gender_pay_gap_statistics


³ Տվյալները վերցված են ՏՀՀԿ վիճակագրական շտեմարանից, հասանելի են՝ <https://stats.oecd.org/index.aspx?queryid=54751#>

⁴ Հասանելի է՝ <http://www.statistica.md>

որ այս երկրներում փոփոխությունը եղել է տարերային և չկա նվազման միտում: Ուկրաինայի դեպքում պետական վիճակագրությամբ հասանելի են միայն 2007, 2016 և 2017 թվականների տվյալներ, որոնց միջոցով հնարավոր չէ մատնանշել շարունակվող միտումները:

Բյուջեի թափանցիկության համաթվերի վերլուծություն

Ինչպես արդեն նշվել է, գենդերային զգայուն բյուջետավորումը բարելավում է բյուջետային գործընթացի թափանցիկությունն ու ծախսարդյունավետությունը: Հասանելի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ գենդերային բյուջետավորման բաղադրիչներ ունեցող երկրները միջազգային զեկույցներում և համաթվերում բյուջեի թափանցիկության տեսանկյունից ունեն բարձր դիրք և գնահատական:



Պատկեր 3. Ամենաբաց բյուջե ունեցող երկրներ, Open Budget Index, 2017

Պատկեր 3-ում պատկերված են Բաց բյուջեի համաթվի արդյունքներով ամենաթափանցիկ

բյուջե ունեցող երկրների քառյակը: Հարկ է նշել, որ Ավստրիայի, Բելգիայի և Նիդերլանդների համար այս համաթիվը ցուցանչային տվյալներ չունի: Սակայն, քառյակում ընդգրկված պետությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից բոլորն ունեն գենդերային զգայուն բյուջետավորման քաղաքականություններ: Նոր Զելանդիան ևս օգտագործում է Ազգերի բրիտանական համագործակցության գործիքակազմը, իսկ Հարավաֆրիկյան Հանրապետությունը որդեգրել է Դայան Էլսոնի առաջարկած քայլերի հաջորդականությունը: Ըստ այս համաթվի՝ Ուկրաինան և Մոլդովան, որոնք դեռևս գործնականում համակողմանիորեն չեն կիրառել գենդերային զգայուն բյուջետավորումը, համարվում են բյուջետային ոչ թափանցիկ քաղաքականություն ունեցող երկրներ և 100-ից ունեն համապատասխանաբար 54 և 58 միավոր: Ընտրանքի մյուս երկրների համար վիճակագրական տվյալները ևս բացակայում են:

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջազգային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականին վավերացրել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, միացել 1995թ. մարտի 9-ին Պեկինում անցկացված Կանանց դրությանը նվիրված չորրորդ համաշխարհային խորհրդաժողովի արդյունքային փաստաթղթերին: Բացի այդ, Հայաստանը Եվրոպական խորհրդի անդամ է սկսած 2001 թվականից և ստորագրել է Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերը: Ինչպես արդեն նշվել է, այս փաստաթղթերով ևս սահմանվում են Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների շրջանակը գենդերային հավասարությունը խթանելու համար:

2017թ. Հայաստանի և Եվրոպական միության միջև ստորագրվել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր): Ըստ այս Համաձայնագրի՝ նախատեսվում է իրականացնել բարեփոխումներ մի շարք ոլորտներում, այդ թվում՝ մոտարկել առկա օրենսդրությունը ԵՄ դիրեկտիվներին: Մարդու իրավունքները, խտրականության դեմ պայքարն ու գենդերային հավասարությունը Համաձայնագրի կարևորագույն կետերից են: Համաձայնագրի 84, 85 և 284 հոդվածները ընդգծում են գենդերային հավասարության խթանման անհրաժեշտությունը, որը կհանգեցնի աղքատության կրճատմանն ու ներառական տնտեսական աճին: ՀՀ-ԵՄ խորը համագործակցության շրջանակներում Եվրոպական միությունը բյուջետային աջակցություն է տրամադրել Հայաստանի Հանրապետությանը հանրային ֆինանսների ոլորտում բարեփոխումների իրականացման համար «Հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում: Ըստ այս համաձայնագրի՝ սահմանվել է գենդերային զգայուն բյուջետավորման նախապայման, որը մինչ օրս չի կատարվել:

2018թ. Հայաստանի Հանրապետությունը դարձել է ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հանձնաժողովի անդամ, որի նպատակը կանանց իրավունքների, հավասարության և կանանց առաջխաղացման հետ կապված խնդիրները օրակարգային դարձնելն է: Այն այս ոլորտում միջազգային քաղաքականություն մշակող միակ միջկառավարական մարմինն է: 2019 թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը՝ պարտավորվելով տեղայնացնել երկրի ազգային ծրագիրը՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևի դրույթներին համապատասխան:

Փաստաթղթերի վերլուծություն

Դեռ 2010 թվականին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության հայեցակարգը, որով սահմանվում են կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական

քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու երկրում հավասարության հասնելու համար ընդհանուր ռազմավարական քայլերը: Այս փաստաթուղթը ելակետային էր, քանի որ հետագայում հայեցակարգային նպատակների իրականացման, ինչպես նաև ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով ընդունվեցին «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը» և «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագիրը»: Այս փաստաթղթերից գատ, 2017 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունն ընդունել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում է քայլեր ձեռնարկել ընտանեկան բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց պաշտպանության ուղղությամբ: Օրենքի շրջանակներում ձևավորվել է Ընտանեկան բռնության կանխարգելման խորհուրդը, որում ներառված են պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

2012 թվականին Կառավարության կողմից մշակվել է «Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ» մեթոդական ձեռնարկը⁵: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով նախատեսվում էր ձեռնարկը փոխանցել շահագրգիռ կողմերին և քայլեր ձեռնարկել ցուցիչների ներդրման համար: Այս ձեռնարկի հիմնական նպատակը գենդերային վիճակագրության մշակումն էր: Հարկ է նշել, որ մշակված ցուցիչները բավական ընդգրկուն են, ծածկում են բոլոր ոլորտները և համապատասխանում միջազգային փաստաթղթերով սահմանված կանոններին: Ընդ որում, դրանք ոչ միայն քանակական են, այլ նաև որակական: Դրանց արդյունավետ կիրառումը հնարավորություն կտար գնահատելու պետական ծրագրերի արդյունավետությունն ու ազդեցությունը տարբեր սոցիալական խմբերի վրա: Արդյունքում քաղաքականությունները կվերաձևակերպվեին՝ համապատասխանելով կանանց և տղամարդկանց տարբերվող կարիքներին: Ցուցիչները կարող են օգտագործվել ոչ միայն առանձին ծրագրերի գնահատումն իրականացնելու, այլ նաև բյուջեն գենդերային զգայուն դարձնելու համար:

2019թ. սեպտեմբերի 19-ին կայացած ՀՀ կառավարության նիստի ընթացքում հավանության է արժանացել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը»: Այս փաստաթղթի ընդունումը կարևոր է Հայաստանում գենդերային հավասարության խթանման համար: Այն սահմանում է գենդերային քաղաքականության հիմնական առաջնահերթությունները՝ առանձնացնելով հինգ գերակա ոլորտներ: Ըստ փաստաթղթի՝ գենդերային զգայուն բյուջեի գործիքակազմի մշակումը և ներդրումը «գենդերային խտրականության կանխարգելում» գերակա նպատակի կարևորագույն գործիքներից է: Հատկանշական է, որ ռազմավարությունը գենդերային զգայուն բյուջետավորման գործիքակազմի կիրառումը զուգադրում է մեկ այլ կարևոր քայլի հետ, որը վերաբերում է սեռով տարբերակված վիճակագրության անհրաժեշտությանը:


⁵ Ձեռնարկը հասանելի է https://www.gov.am/u_files/file/xorhurdner/kananc-xorh/Gender-metodakan%20dzernark.pdf

Վիճակագրական տվյալներ

Գենդերային դերերը և նորմերը խորը արմատացած են հայաստանյան հասարակությունում՝ պայմանավորելով կանանց և տղամարդկանց համար ընդունելի վարքաձևեր: Այս կարծրատիպերը հաճախ խոչընդոտում են կանանց ինքնաիրացմանը տարբեր բնագավառներում՝ քաղաքականություն, ֆորմալ զբաղվածություն, բիզնես առաջնորդություն և այլն:

Աշխատաշուկա


Գենդերային անհավասարությանը նպաստող գործոններից է կանանց և



Պատկեր 4, Աշխատանքային ռեսուրսների բաշխվածությունը Հայաստանում, Ազգային վիճակակրական կոմիտե, 2017

տղամարդկանց տնտեսական հնարավորությունների անհավասարությունը, մասնավորապես աշխատաշուկայում ներգրավվածության անհամաչափությունը: Պատկեր 4-ը ցույց է տալիս Հայաստանում աշխատանքային ռեսուրսների բաշխվածությունը կանանց և տղամարդկանց միջև: Ակնհայտ է, որ տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակը տղամարդկանց շրջանում ավելի բարձր է, քան կանանց:

Տնտեսապես ակտիվ են կանանց 52.8%-ը, իսկ տղամարդկանց 70.7%-ը: Ընդ որում տնտեսապես ակտիվ կանանց 43.3%-ն է զբաղված, իսկ տղամարդկանց՝



Պատկեր 5, Չբաղվածներն ըստ գործունեության խմբերի, Ազգային վիճակակրական կոմիտե, 2017

57.9%-ը:

Այս անհավասարությունը երևում է նաև տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում (Պատկեր 5): Կանանց ներգրավվածությունը հատկապես ցածր է շինարարության ոլորտում (2%), իսկ արդյունաբերության համամետաբար բարձր ցուցանիշը (32%) պայմանավորված է թեթև արդյունաբերության կշռով, որտեղ կանանց մասնակցությունը բարձր է (կարի ֆարրիկաներ, կոշիկի արտադրություն և այլն): Ի հակադրություն այդ ոլորտների՝ կանայք գերակշռում են պետական կառավարման, կրթության, առողջապահության, սոցիալական սպասարկման և գյուղատնտեսության ոլորտներում: Սա արտացոլում է աշխատաշուկայում առկա հորիզոնական խտրականությունը:

Չնայած որ հանրային սեկտորում գերակշռում են կանայք, սակայն միջին նոմինալ աշխատավարձի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանի աշխատաշուկայում առկա է նաև ուղղահայաց խտրականություն՝ կանանց ներգրավվածությունը բավականին ցածր է բարձր պաշտոններում (Աղյուսակ 3):

	Հանրային ոլորտի գրավվածների թիվը (անձ)	Միջին ամսական նոմինալ աշխատավարձ (ՀՀ դրամ)
Կին	140.000	132.000
Տղամարդ	108.000	197.000

Աղյուսակ 3, Զբաղվածների թիվը և միջին նոմինալ աշխատավարձը, Ազգային վիճակակրթական կոմիտե, 2017

Նման պատկեր է նաև մասնավոր հատվածում, որտեղ կանանց միջին աշխատավարձը 157.695 ՀՀ դրամ է, իսկ տղամարդկանցը՝ 220.937 ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ, Հայաստանում կանանց ու տղամարդկանց վարձատրության միջև խզումը 32.5% է: Հայաստանում կանանց աղքատության թիվը 30.2% է, իսկ տղամարդկանցը՝ 28.5%-ը: Կանայք աղքատ բնակչության 56.6%-ն են, իսկ տղամարդիկ՝ 43.4%-ը: Իսկ եթե դիտարկենք տնային տնտեսություններն ըստ տան գլխավորի սեռի, ապա կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունները ավելի աղքատ են՝ 33.4%, քան տղամարդ գլխավոր ունեցող տնային տնտեսությունները՝ 28%⁶:

Կրթություն

Ինչպես աշխատաշուկայի, այնպես էլ կրթության դեպքում առկա է մասնագիտությունների կամ ուսման ոլորտների հորիզոնական խտրականություն: Այսպես, նախնական մասնագիտական կրթության մակարդակում կանայք գրեթե բացակայում են էներգետիկայի, մեքենաշինության, ռադիոտեխնիկայի, տրանսպորտի և այլ նման ոլորտներում: Մինչդեռ, նրանք ավելի շատ ներկայացված են թեթև արդյունաբերության, սպասարկման, պարենամթերքի արտադրության ոլորտներում:

Միջին մասնագիտական հաստատությունների դեպքում կանայք գերակշռում են առողջապահության (բժշկական ուսումնարաններ), իրավագիտության,

⁶ Աղքատության վերաբերյալ տվյալները հասանելի են՝ https://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf

մանկավարժության, արվեստի, թեթև արդյունաբերության ոլորտներում: Տղամարդիկ ավելի շատ ներկայացված են արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, կապի և գյուղատնտեսության ոլորտներում:

Բարձրագույն կրթական հաստատություններում կանայք գերակշռում են բանասիրական, հումանիտար, սոցիալական, առողջապահական ոլորտներում, իսկ տղամարդիկ՝ անասնաբուժության, գյուղատնտեսության, ճարտարագիտության, ճարտարապետության, արդյունաբերության, անվտանգության, տեղեկատվության և հողորդակցության ոլորտներում:

Պետք է նաև նշել, որ չնայած կանայք ավելի երկար են կրթություն ստանում և գերակշռում են բարձրագույն կրթության ոլորտում, սակայն նրանց միայն 54%-ն է զբաղված, մինչդեռ այդ ցուցանիշը տղամարդկանց համար 69.3% է: Միջին մասնագիտական կրթություն ստացած կանանց 41.4%-ն է զբաղված, իսկ տղամարդկանց՝ 57.7%-ը:

Այսպիսով, տարբեր մակարդակների կրթական հաստատություններում կանանց և տղամարդկանց բաշխվածությունը ըստ ոլորտների ցույց է տալիս հորիզոնական խտրականությունը և գենդերային կարծրատիպերը կրթության ոլորտում: Այն ոլորտները, որտեղ կանայք ավելի շատ են, ավանդորեն համարվում են և ընկալվում են կանացի ուղղություններ: Իսկ STEM ուղղությունները (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա) դիտվում են որպես տղամարդկային:

Հարկ է նաև նշել, որ նախադպրոցական (99.7%), հանրակրթական (85.4%), նախնական մասնագիտական (69.7%) և միջին մասնագիտական հաստատություններում (74.7%) մանկավարժների և դասախոսների գերակշիռ մեծամասնությունը կանայք են: Այս մեծ տարբերությունը ևս կապված է ցածր աշխատավարձերի հետ:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում ծառայությունները գրեթե հավասարապես են հասանելի թե՛ կանանց, և թե՛ տղամարդկանց համար:

Մի շարք ծրագրեր թիրախավորում են հենց կանանց (կրծքագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղի հայտնաբերման և կանխարգելման ծրագրեր): Կանանց շրջանում զգալիորեն բարձր է կրծքագեղձի, հաստ աղու, արգանդի պարանոցի և մարմնի հիվանդացությունը: Կրծքագեղձի և արգանդի պարանոցի քաղցկեղները կանանց չարորակ նորագոյացությունների կառուցվածքում գրավում են առաջին և երկրորդ տեղերը: Այդ հիվանդություններն առավել հաճախ հանդիպում են 35-55 տարեկան կանանց մոտ: Հազվադեպ են հանդիպում 20 տարեկանից ցածր տարիքի կանանց մոտ, իսկ դեպքերի մեծամասնությունը արձանագրվում է 65-ից բարձր տարիքի կանանց շրջանում (Անդրեասյան և այլք, 2018):


Տղամարդկանց շրջանում բարձր է շնչափողի, բրոնխների, թոքի, միզապարկի, ստամոքսի շագանակագեղձի քաղցկեղով հիվանդացությունը: Ակտիվ տուբերկուլոզով հիվանդների 72.4%-ը տղամարդիկ են (Անդրեասյան և այլք, 2018):

Կրթձագեղձի և արգանդի վզիկի քաղցկեղի հետազոտման և վաղ հայտնաբերման համար իրականացվում են մի շարք անվճար ծրագրեր: Բացի այդ, նաև իրականացվում է տուբերկուլոզի անվճար ախտորոշում և բուժում: Ինչ վերաբերում է թոքի քաղցկեղին, ապա այն ախտորոշելու կամ հայտնաբերելու համար անվճար ծառայություններ չեն տրամադրվում:

Քաղաքական մասնակցություն

Չնայած այն փաստին, որ կանայք ավելի շատ են հասկապես բարձրագույն կրթություն ստանում, սակայն թերներկայացված են ինչպես աշխատաշուկայում, այնպես էլ քաղաքական տարբեր գործընթացներում և մարմիններում:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի վավերացումից հետո Հայաստանում ներդրվեց գենդերային քվոտա՝ քաղաքական կյանքում կանանց ներգավաժության մեծացման համար: Ըստ Ընտրական օրենսգրքի, գենդերային քվոտան 30% է, ինչը նշանակում է, որ կուսակցությունների ցուցակներում ներկայացվածների առնվազն 30%-ը պետք է լինեն կանայք (Ընտրական օրենսգիրք, 2016): Վերջին տարիներին փոփոխություններ են գրանցվել օրենսդիր մարմնում կանանց թվաքանակի աճի առումով: Ներկայումս, Ազգային ժողովի 132 պատգամավորներից 32-ը կանայք են, որը 24.2%-ն է կազմում: Նախորդ տարիների համեմատ այս ցուցանիշը բարելավվել է՝ 2012 թվականին կին պատգամավորները 14-ն էին, 2017-ին՝ 19-ը (Պատկեր 6):



Պատկեր 6, Կին պատգամավորների թիվը

Կառավարությունում 12 նախարարություններից միայն մեկի նախարարն է կին: Նախարարների տեղակալների շրջանում 26.6%-ը կանայք են (45-ից 12-ը): Համեմատության համար պետք է նշել, որ 2017 թվականին նախարարների կին տեղակալների թիվը եղել է 2:

Հարկ է նշել նաև, որ մտահոգիչ են Հայաստանի ցուցանիշները միջազգային զեկույցներում և համաթվերում: Ըստ Գենդերային խզվածքի համաթվի՝ Հայաստանը 2016 թվականին 145 երկրների ցանկում 102-րդ տեղում էր, 2017 թվականին՝ 97-րդ, իսկ 2018 թվականին՝ 98-րդում: Այսպիսով, հայաստանյան հասարակությունում գենդերային անհավասարությունը պայմանավորված է գոյություն ունեցող կարծրատիպերով, որոնք դրսևորվում են բոլոր ոլորտներում: Այս պայմաններում ոչ

պակաս կարևոր է պետության դերը: Պետական ծրագրերի ճիշտ նախագծումը կարող է էապես ազդել կարծրատիպերի փոփոխման վրա: Առկա անհավասարության հիմքը իրականացվող քաղաքականություններում և ծրագրերում կանանց և տղամարդկանց առանձին կարիքները և սոցիալական այս խմբերի վրա ծրագրերի հնարավոր ազդեցությունը հաշվի չառնելն է:

ՀՀ պետական բյուջեի վերլուծություն

Հայաստանում բյուջետային գործընթացն սկսվում է վարչապետի որոշմամբ: Դրանից հետո հաստատվում են պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը: Բյուջետային ընդհանուր գործընթացը սկսվում է հունվար ամսին և ավարտվում նոյեմբեր-դեկտեմբերին: Վերջին փուլում բյուջեի մասին օրենքի նախագիծը քննարկվում է ՀՀ ԱԺ կողմից: Ծրջափուլն ավարտվում է պետական բյուջեի մասին օրենքի ընդունմամբ: Հարկ է նշել նաև, որ ընթացիկ բյուջեն հիմնված է նախորդ տարվա բյուջեի վրա: Պետական բյուջեն, ըստ էության երեք տարվա համար մշակված ՄԺԾԾ-ի ընթացիկ տարվա ծախսային բացվածքն է: Հենց ՄԺԾԾ փաստաթուղթն է արտացոլում երկրի առաջնահերթություններն ու գերակա ոլորտները՝ երեք տարվա ժամկետում:

ՀՀ 2017, 2018, 2019 թվականների պետական բյուջեի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարբեր տարիներին բյուջեի կառուցվածքում առանձնակի փոփոխություններ տեղի չեն ունեցել թե՛ եկամուտների, թե՛ ծախսերի առումով: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր տարի բյուջետային ամենաշատ միջոցներն ուղղվում են սոցիալական պաշտպանության ոլորտ, սակայն ծրագրերի խորը ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած գենդերային քաղաքականությունը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգման տիրույթում է, այնուամենայնիվ, պետական բյուջեի ծրագրային հատվածում գրեթե բացակայում են այն ծրագրերը, որոնք ուղղված են գենդերային հավասարությանն ու հասանելիության բարձրացմանը: Քանի որ պետական բյուջեն միջնաժամկետ ծախսերի ծրագրի տարեկան բացվածքն է, պետական առաջնահերթությունների և գերակա ոլորտների մասին կարելի է պատկերացում կազմել հենց այդ փաստաթղթից: Հայաստանի Հանրապետության կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրերում ուսումնասիրվել են կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտները 2017-2019, 2018-2020, 2019-2021 և 2020-2022 թվականների համար:

Սոցիալական պաշտպանություն

Բոլոր փաստաթղթերում սոցիալական պաշտպանության բնագավառում ծրագրերի հիմնական նպատակը երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումն են:

2017-2019 թվականներին ոլորտում առանձնացվել է 13 բնագավառ, դրանք ներառում են զբաղվածությունը, անապահով սոցիալական խմբերին աջակցությունը, սոցիալական ապահովությունը, կենսաթոշակային համակարգը, աշխատանքի և աշխատավարձի պետական կարգավորումը: Հարկ է նշել, որ ծրագրերից ընդամենը

մեկն է վերաբերում ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցությանը: Չնայած ծրագրի վերնագրում նշվում է կանանց մասին, սակայն դրա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն միայն երեխաների աջակցությանն է վերաբերում: Կանանց թիրախավորող միակ ծրագիրն ուղղված է հղիությունից և ծննդաբերությունից չաշխատող մայրերին աջակցության տրամադրմանը: Նշված ժամանակահատվածի համար ծախսերի ծրագրում գործողությունները տարանջատված չեն ըստ սեռի, ինչը հնարավորություն չի տալիս հասկանալ, թե ինչքանով են դրանք հաշվի առնում կանանց և տղամարդկանց կարիքները:

Հարկ է նշել նաև, որ 2018-2020 և 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերում սոցիալական պաշտպանության ոլորտում ներառվել են կանանց և տղամարդկանց հավասարությունը շեշտող դրույթներ: Ոլորտի գերակայություններից է հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերումը՝ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության բարձրացումը: Ծրագրերը նպատակաուղղված են լինելու աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը, «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունների խթանմանը, առկա թափուր աշխատատեղերի համալրմանը: Հատկանշական է, որ զբաղվածության բնագավառում նախատեսվող միջոցառումներում շեշտվում է կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը: Ի տարբերություն 2017-2019 թվականների ծրագրերի՝ նոր ծրագրերում նախատեսվում է նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց աջակցության տրամադրում՝ երեխայի խնամքը դայակի կամ վճարովի հիմունքներով գործող նախադպրոցական հաստատության օգնությամբ կազմակերպելու միջոցով: Մեկ այլ ծրագիր է նաև երեխա ունեցող կանանց համար դասընթացների կազմակերպումը, որը հնարավորություն կտա երեխա ունեցող կանանց ձեռք բերել անհրաժեշտ հմտություններն ու իրացվել աշխատաշուկայում:

Երբ ուսումնասիրում ենք նախատեսվող ֆինանսական միջոցների պատկերը, ակնհայտ է դառնում, որ 2017 թվականից սկսած այս ոլորտին հատկացվող միջոցներն էապես ավելացել են: Աղյուսակ 4-ում պատկերված են 2017, 2018 թվականների հաստատված բյուջեով սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղված ֆինանսական միջոցները, 2020-2022 թվականների համար ներկայացված են ՄԺԾԾ-ով գնահատվող ծախսերը:

	2017	2018	2019	2020	2021	2022
Ծախսեր	404,036.8 մլն	403,694.4 մլն	438,082.9 մլն	486,226.0 մլն	489,793.1 մլն	496,417.0 մլն

Աղյուսակ 4, Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսեր, 2017-2022թթ.

Կրթություն

Եթե 2017-2019 թվականների համար միջնաժամկետ ծախսերի ծրագրում կրթության բնագավառում ակնկալվող հիմնական արդյունքներից մեկը բոլոր մակարդակներում կրթության մատչելիության բարձրացումն ու հավասար հնարավորությունների ստեղծումն է, ապա մյուս փաստաթղթերի համար գլխավոր

հիմնախնդիրը միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան որակի ապահովումն է:

Կրթության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրերն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ նշված գործողությունները տարբերակված չեն ըստ սեռի կամ կանանց և տղամարդկանց վրա հնարավոր ազդեցության: Ուշադրություն չի դարձվում կրթության ոլորտում գոյություն ունեցող կարծրատիպերին, որոնք այս ոլորտում գենդերային հավասարության հիմնական խոչընդոտներն են:

Առողջապահություն

2017-2019 թվականների համար միջնաժամկետ ծախսերի ծրագրում առողջապահության բնագավառում հիմնական նպատակները կենտրոնանում են առողջապահության հասանելիության և մատչելիության վրա, սակայն 2018-2020 և 2020-2022 թվականների համար ընդգծվում է մատուցվող ծառայությունների որակի բարձրացման կարևորությունը: Բոլոր փաստաթղթերում էլ առանձնացվում են կանանց և երեխաներին մատուցվող բժշկական ծառայությունների մատչելիության և որակի բարելավման անհրաժեշտությունը:

Փաստաթղթերում առանձնացված ծրագրերը վերաբերում են մոր և մանկան առողջության ապահովմանն ու վերարտադրողական առողջության բարելավմանը: Մի շարք գործողություններ ուղղված են մայրական մահացության մակարդակին, վերարտադրողական օրգանների (կրծքագեղձ, արգանդի վզիկ) քաղցկեղային հիվանդություններին, սքրինինգային հետազոտություններում կանանց ընդգրկվածությանը, կանանց շրջանում սեռավարակների մակարդակին և այլն: Այսպիսով, առողջապահության բնագավառում հիմնական ծրագրերը նույնպես տարբերակված չեն ըստ սեռի: 12 ծախսային ծրագրերից միայն մեկում («մոր և մանկան առողջության պահպանում») շեշտը դրվում է հենց կանանց առողջության վրա:

Բյուջետային գործընթացի փաստաթղթերի վերլուծությունը փաստում է, որ անկախ գենդերային զգայուն և տարանջատված ցուցիչների առկայությանը, թե՛ պետական բյուջեում (այդ թվում՝ համայնքային), թե՛ միջնաժամկետ ծախսերի ծրագրերում բացակայում է կանանց և տղամարդկանց վրա քաղաքականությունների ազդեցության գնահատումը, ծրագրերը նաև չեն սահմանում թիրախային խմբերին: Կարող ենք եզրակացնել, որ հստակ չէ նաև շահառուների խմբերի՝ սեռով տարանջատված պատկերը, որը ազդում է իրականացվող պետական ծրագրերի արդյունավետության վրա:

ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Իրականացված հարցազրույցների արդյունքում պարզ դարձավ, որ թե՛ միջազգային կազմակերպությունների, թե՛ քաղաքացիական հասարակության, թե՛ պետական գերատեսչությունների կողմից կարևորվում է գենդերային հավասարությունը, կանանց և տղամարդկանց միջև տարբեր ոլորտներում առկա խզվածքի նվազեցումը, սոցիալական բոլոր խմբերի համար որոշումների կայացման գործընթացին մասնակցելու հասանելիությունը:

Պետական մարմինների ներկայացուցիչների խոսքով՝ Կառավարության համար առաջնային է գենդերային հավասարության ապահովման գործուն մեխանիզմների վերագործարկումը կամ ներդրումը: Այդ մեխանիզմների թվում թե՛ նախկինում օգտագործված գործիքներ են, թե՛ Հայաստանի միջազգային պարտավորություններով ստանձնած նոր գործիքակազմի կիրառումը: Առաջինների թվում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով խորհրդի վերակազմավորումն է՝ կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներին վերաբերող աշխատանքները համակարգելու և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ազգային մեխանիզմ ձևավորելու նպատակով: Ամբողջովին նոր մեխանիզմը, ըստ գրուցակիցների, Եվրոպական միության աջակցությամբ գենդերային զգայուն բյուջետավորման գործիքակազմի մշակումն ու ներդրումն է:

Փորձագետների կարծիքով՝ գենդերային զգայուն բյուջետավորումը ներդնելու համար անհրաժեշտ է իրականացնել կանանց և տղամարդկանց իրավիճակի համապարփակ գնահատում, ընդ որում ներկայիս «Հայաստանի կանայք և տղամարդիկ» զեկույցը միայն ելակետ կարող է լինել: Անհրաժեշտ է մշակել և վարել սեռով տարբերակված, համակարգված և միասնական վիճակագրություն, որը լիովին այլ քաղաքականությունների նախագծման հնարավորություն կընձեռի: Այս գործում հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարական փաստաթղթի ընդունումը, որտեղ հստակ ամրագրված են գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման կարևորությանը և դրա արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ պայմաններին վերաբերող դրույթներ:

Գենդերային զգայուն բյուջետավորման ներդրմանը զուգընթաց կարևորվում է նաև զանգվածային լրատվության միջոցների գենդերային զգայունության բարձրացումը: Հարցազրույցների ընթացքում պարզ դարձավ, որ արդյունավետ քայլ կարող է լինել նաև լրագրողների մասնագիտական կրթության և վերապատրաստումների ընթացքում գենդերային բաղադրիչների ներմուծումը:

Բոլոր փորձագետների կողմից անհրաժեշտ քայլ է դիտվում նաև իրազեկվածության բարձրացումն ու առկա կարծրատիպերի հաղթահարումը սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հատկապես կարևորում են հանրային ծառայողների գենդերային զգայունության բարձրացումը: Խոսքը, մասնավորապես վերաբերում է հենց այն մարդկանց, ովքեր անմիջականորեն պատասխանատու են տարբեր նախարարություններում միջնաժամկետ ծախսերի ծրագրի կամ բյուջեի նախագծման վրա աշխատելու համար:

Թե՛ միջազգային կազմակերպությունների, թե՛ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից բարձրացվում է կրթության բնագավառում և աշխատաշուկայում դրսևորվող և անընդհատ վերարտադրվող կարծրատիպերի հաղթահարման կարևորության հարցը: Ընդ որում, տեղի և միջազգային կազմակերպությունների փորձագետները պնդում են, որ կարծրատիպերը վերարտադրվում են նաև մեդիայի միջոցով: Ուստի, հատկապես կրթության ոլորտում անհրաժեշտ է դասընթացներ անցկացնել ուսուցիչների հետ, ինչպես նաև գենդերային

զգայուն բաղադրիչը մտցնել դասագրքերի և մանկավարժական մեթոդաբանությունների մեջ: Աշխատաշուկայում գենդերային հավասարության խրախուսմանը կարելի է հասնել քվոտավորման համակարգի միջոցով:

Հարցազրույցները փաստում են, որ գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման համար անհրաժեշտ առաջին և կարևորագույն նախապայմանը քաղաքական կամքի առկայությունն է: Մյուս հարցերն ամանցյալ են, քանի որ կարելի է միջազգային փորձն ուսումնասիրել և գտնել լավագույն գործիքները: Այնուամենայնիվ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հանրային ֆինանսներում գենդերային բաղադրիչի արդյունավետ ներդրման համար առաջարկում են յուրաքանչյուր նախարարությունում ունենալ գենդերային բյուջետավորման մասնագետներ, ովքեր կուսումնասիրեն բյուջեն գենդերային զգայունության տեսանկյունից և կգնահատեն դրա հնարավոր ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա: Փորձագետները պնդում են, որ բյուջեի՝ գենդերային տեսանկյունից վերլուծությունը նաև արդարության բաղադրիչ է պարունակում և ապահովում է գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Չնայած բոլոր հարցվողների կողմից կարևորվում էր քաղաքացիական հասարակության և պետական մարմինների համագործակցությունը, սակայն հարցազրույցները ցույց են տալիս, որ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները չունեն բյուջետավորման գործընթացի վերաբերյալ խորը գիտելիքներ, ուստի, ՀԿ ներկայացուցիչների կարծիքով, իրենք կարող են լավագույնս օգտակար լինել իրավիճակային վերլուծության կամ պետական մարմինների ներկայացուցիչների գենդերային զգայունությունը բարձրացնելու ժամանակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրականության և միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև խորին հարցազրույցները փաստում են, որ գենդերային զգայուն բյուջետավորումը մեծապես ազդում է բյուջետավորման գործընթացի թափանցիկության և արդյունավետության բարձրացման վրա: Հայաստանի իրավիճակային վերլուծությունը ցույց է տալիս, սակայն, որ ներկայումս պետական ծրագրերը նախագծելիս հաշվի չեն առնվում դրանց շահառուների սեռային տարբերությունները, որի հետևանքով անուշադրության են մատնվում կանանց և տղամարդկանց հատուկ կարիքները:

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ի թիվս այլ բացերի, Հայաստանի Հանրապետությունում առկա չէ գենդերային զգայուն բյուջետավորման համար անհրաժեշտ հիմնական պայմաններից մեկը՝ սեռով տարբերակված վիճակագրությունը: Չնայած որ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից ամեն տարի պատրաստվում է «Հայաստանի կանայք և տղամարդիկ» գեկույցը, փաստաթղթի տված տվյալները սահմանափակ են:

Առկա գրականությունն ու միջազգային փորձն ապացուցում են, որ գենդերային զգայուն բյուջետավորումը բարդ գործընթաց է, որը չունի միատեսակ կամ լավագույն գործիքակազմ: Սակայն, այս գործընթացում անհրաժեշտ է պետության,

քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների արդյունավետ համագործակցության ձևաչափի կայացում:

Աշխատանքի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության համար գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման լավագույն մոդելի առաջադրումն էր: Ներկայացվող մոդելը հիմնված է Ազգերի բրիտանական կազմակերպության կողմից մշակված գործիքակազմի վրա, որը, սակայն, լրամշակվել և խմբագրվել է՝ հարմարեցվելով հայաստանյան իրականությանը: Առաջարկվող քայլերը առանձնացվում են ըստ բյուջետավորման փուլերի և պատասխանատու մարմինների:

Առաջարկվող մոդելը հիմնված է հետևյալ տրամաբանության վրա՝

- կանայք և տղամարդիկ քաղաքականությունների վերջնական շահառուներն ու օգտագործողներն են,
- քաղաքականությունները տարբեր կերպ են ազդում սոցիալական խմբերի վրա,
- բյուջեն հանրային և մակրոտնտեսական քաղաքականության գործիք է, որը տարբեր կերպ է ազդում կանանց և տղամարդկանց վրա,
- բյուջետային բոլոր գործընթացները կարող են որևէ կերպ ազդել երկրի գենդերային հավասարության վրա:

Այս ամենը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է բարձրացնել բյուջետավորման գործընթացի գենդերային զգայունությունը: Հատկանշական է սակայն, որ մոդելից և առաջարկվող քայլերից գատ կարևոր է քաղաքական կամքի առկայությունը:

Հայաստանյան իրականությունում քաղաքացիական հասարակության անելիքներն այս գործընթացում սահմանափակ են, ուստի հասարակական կազմակերպություններն ու միավորումները պետք է՝

- ինտենսիվ արշավների միջոցով (advocacy) հաշվետու պահեն կառավարությանը,
- կրթական ծրագրերի օգնությամբ բարձրացնեն հասարակության գենդերային զգայունությունը,
- մասնակցեն հանրային ծառայողների վերապատրաստումներին,
- մշտադիտարկեն պետական մարմինների գործողությունները:

Հատկապես կարևոր է նաև միջազգային կազմակերպությունների մասնագիտական և փորձագիտական աջակցությունը թե՛ բյուջետավորման, թե՛ վերապատրաստումների կազմակերպման գործընթացներում:

Առկա գրականության, միջազգային փորձի, Հայաստանի իրավիճակի և հարցազրույցների արդյունքում առաջարկվող մոդելը ներկայացվում է Աղյուսակ 5-ում:

Փուլ	Քայլ/գործիք	Պատասխանատու
Նախապատրաստում	Սեռով տարբերակված վիճակագրության մշակում	Գործադիր
	Գենդերային զգայունության նպատակով հանրային ծառայողների վերապատրաստումների կազմակերպում	Գործադիր և Օրենսդիր
	Օրենսդրությամբ քաղաքականության մշակման գործընթացում գենդերային ազդեցության գնահատման անհրաժեշտության սահմանում	Գործադիր և Օրենսդիր
Բյուջեի նախագծում	Հանրային ծառայությունների շահառուների սեռով տարբերակված գնահատման իրականացում, որը կարտացոլի, թե որքանով են պետական քաղաքականություններն ու ծրագրերը բավարարում տարբեր շահառուների կարիքները	Գործադիր
	Հանրային ծախսի բաշխվածության սեռով տարբերակված վերլուծության իրականացում, որը կդառնա գենդերային բաղադրիչի ներդրման ելակետ	Գործադիր
	Քաղաքականության՝ գենդերի տեսանկյունից իրազեկ գնահատման իրականացում	Գործադիր
	Գենդերի տեսանկյունից իրազեկ բյուջետային հայտերի պատրաստում (ըստ նախարարությունների)	Գործադիր
	Ժամանակի օգտագործման վրա բյուջեի ազդեցության՝ գենդերային տեսանկյունից իրազեկ վերլուծության իրականացում	Գործադիր
	Գենդերային զգայուն ցուցիչների օգնությամբ գենդերի տեսանկյունից իրազեկ ՄԺԾԾ փաստաթղթերի պատրաստում	Գործադիր
	Պետական եկամուտների բաշխվածության՝ սեռով տարբերակված վերլուծության իրականացում	Գործադիր
Բյուջեի քննարկում	Ազգային ժողովի հատուկ հանձնաժողովներում, ինչպես նաև ոչ մասնագիտական խմբերում քննարկումների արդյունքում բյուջեի ապամիֆականացման ապահովում	Օրենսդիր
	Զսպման և հակակշռման մեխանիզմների միջոցով բյուջեի՝ գենդերի տեսանկյունից իրազեկ բազմակողմանի քննարկում	Օրենսդիր
	Մեդիայի օգնությամբ հասարակության գենդերային զգայունության բարձրացում	Գործադիր և Օրենսդիր
Բյուջեի կատարում	Ծրագրերի արդյունավետ իրականացման ընթացքում սեռով տարբերակված անհրաժեշտ տվյալների հավաքագրում՝ բյուջետային հաջորդ գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով	Գործադիր
	Արդյունքների մշտադիտարկում և վերլուծություն	Գործադիր
Աուդիտ	Իրականացված ծրագրերի գենդերային ազդեցության վերլուծության իրականացում	Գործադիր և Օրենսդիր

Աղյուսակ 5, գենդերային զգայուն բյուջետավորման ներդրման քայլերի հաջորդականություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Anxo, D., Mencarini, L., Pailhé, A., Solaz, A., Tanturri, M. L., & Flood, L. (2011). Gender differences in time use over the life course in France, Italy, Sweden, and the US. *Feminist Economics*, 17(3), 159–195. <https://doi.org/10.1080/13545701.2011.582822>
- Aristovnik, A. and Seljak, J. (2009) *Performance budgeting: selected international experiences and some lessons from Slovenia*, MPRA.
- Austen, S., Costa, M., Sharp, R., & Elson, D. (2013). Expenditure Incidence Analysis: A Gender-Responsive Budgeting Tool for Educational Expenditure in Timor-Leste? *Feminist Economics*, 19(4), 1–24. <https://doi.org/10.1080/13545701.2013.830187>
- BAURCIULU, A., PARTACHI, I., SAINSUS, V., VACULOVSKI, D., CASIAN, A., & PETROIA, A. (2016). *Gender Responsive Budgeting* (Vol. 10). Chisnau: Foxtrot. <https://doi.org/10.1177/097206340801000205>
- Budlender, D., Elson, D., Hewitt, G. and Mukhopadhyay, T. (2002): *Gender Budgets Make Cents: Understanding gender responsive budgets*, Commonwealth Secretariat, London.
- 14 Council of Europe (2005): Final report of the Group of specialists on gender budgeting, Directorate General of Human Rights, (EG-S-GB), Strasbourg. Available at: http://www.genderbudgets.org/index.php?option=com_joomdoc&view=documents&path=resources/by-regioncountry/europe-cee-and-cis-documents/gender-budgeting-final-report-europe&Itemid=542
- Council of Europe (2009). *Gender budgeting: practical implementation*. Strasbourg: Council of Europe.
- Council of Europe. (2016). *Gender Budgeting. Directorate General of Human Rights*. Strasbourg. <https://doi.org/10.5771/9783845264608-275>
- Debusscher, P. (2012). Mainstreaming Gender in European Union Development Policy in the European Neighborhood. *Journal of Women, Politics and Policy*, 33(4), 322–344. <https://doi.org/10.1080/1554477X.2012.722427>
- DINGO, R. (2012). *GENDER MAINSTREAMING*. In Networking Arguments: Rhetoric, Transnational Feminism, and Public Policy Writing (pp. 28-66). Pittsburgh, Pa: University of Pittsburgh Press. doi:10.2307/j.ctt5hjn0g.5
- Djordjevic, D. S. (2016). Gender Sensitive Policies: Are There Any Changes in the Republic of Macedonia From 1990 To 2011? *Journal of Liberty and International Affairs*, 1(3), 30–44.
- Downes, R., Von Trapp, L., & Nicol, S. (2016). Gender Budgeting in OECD countries Gender budgeting in OECD countries. *OECD Journal on Budgeting*, (3).
- EIGE. (2016). *What is gender mainstreaming? | EIGE*. Luxembourg. <https://doi.org/10.2839/48892>
- Elson, D. (1998): *Gender Budget Initiative Background Papers*, Commonwealth Secretariat.

- Elson, D. (2001). *Gender Responsive Budget Initiatives: Some Key Dimensions and Practical Examples*. UNIFEM-OECD-NORDIC Council Conference.
- Heintz, J. (2019). Gender inequality and macroeconomic policy. In *The Economy's Other Half: How Taking Gender Seriously Transforms Macroeconomics* (pp. 5-26). Newcastle upon Tyne: Agenda Publishing.
- Holvoet, N. (2006): *Gender Budgeting: Its Usefulness in Programme-Based Approaches to Aid*, EC Gender Help Desk.
- Joyce, P. G. (2003): *Linking Performance and Budgeting: Opportunities in the Federal Budget Process*, IBM Center for the Business of Government, Arlington, Virginia.
- Kanuri, C., Revi, A., Espey, J., & Kuhle, H. (2016). *Getting Started with the SDGs in Cities: A Guide for Stakeholders* (pp. 65-89, Rep.). Sustainable Development Solutions Network. Retrieved from <http://www.jstor.org/stable/resrep15872.11>
- Klatzer, E., & Ivanina, T. (2015). *Gender Responsive Budgeting: Analysis of Budget Programmes from Gender Perspective*.
- Lorber, J. (2001), *Gender Inequality: Feminist Theories and Politics*. Roxbury Pub. Retrieved from https://books.google.am/books?id=V_u0AAAIAAJ
- Neundorf, A., & Soroka, S. (2018). The origins of redistributive policy preferences: political socialisation with and without a welfare state. *West European Politics*, 41(2), 400–427. <https://doi.org/10.1080/01402382.2017.1388666>
- Norton, A., Elson, D., Budlender, D., Christiansen, K., Conway, T., Eyben, R., ... Zeitlyn, S. (2002). *What's behind the budget? Politics, rights and accountability in the budget process*. Overseas Development Institute.
- OECD. (2018). *Policy Coherence for Sustainable Development and Gender Equality*. Retrieved from <http://www.oecd.org/gov/gender-mainstreaming/policy-coherence-for-sustainable-development-and-gender-equality.pdf>
- Ornstein, N., Mann, T., & Malbin, M. (2008). *Budgeting*. In *Vital Statistics on Congress 2008* (pp. 133-142). Washington, D.C.: Brookings Institution Press. Retrieved from <http://www.jstor.org/stable/10.7864/j.ctt1262j4.12>
- Quiggin, J. (2014). *Macroeconomic policy after the Global Financial Crisis*. In Miller C. & Orchard L. (Eds.), *Australian public policy: Progressive ideas in the neoliberal ascendancy* (pp. 45-62). Bristol, UK; Chicago, IL, USA: Bristol University Press. doi:10.2307/j.ctt1ggjk39.9
- Quinn, S. (2009). *Gender budgeting: practical implementation. Handbook*. Council of Europe. Retrieved from <http://www.coe.int>
- Quinn, S. (2013). *Equality Responsive Budgeting*. Northern Ireland.
- Rubin, M., & Bartle, J. (2005). *Integrating Gender into Government Budgets: A New Perspective*. *Public Administration Review*, 65(3), 259-272. Retrieved from <http://www.jstor.org/stable/3542503>

- Schick, A. (1988). Micro-Budgetary Adaptations to Fiscal Stress in Industrialized Democracies. *Public Administration Review*, 48(1), 523-533. doi:10.2307/975515
- Seguino, S. (2019). Engendering Macroeconomic Theory and Policy. *Feminist Economics*, 0(0), 1–35. <https://doi.org/10.1080/13545701.2019.1609691>
- Sharp, R. (2003). *Budgeting for Equity: Gender Budget Initiatives Within a Framework of Performance Oriented Budgeting*. UNIFEM. <https://doi.org/10.1192/bjp.112.483.211-a>
- Sharp, R., & Schech, S. (2007). Gender Analysis : Concepts , Tools & Practice. *Asia-Pacific Economic Cooperation*, (June), 96.
- Sodani, P. R., & Sharma, S. (2008). Gender Responsive Budgeting. *Journal of Health Management*, 10(2), 227–240.
- Steccolini, I. (2019). New development: Gender (responsive) budgeting—a reflection on critical issues and future challenges. *Public Money and Management*, 0(0), 1–5. <https://doi.org/10.1080/09540962.2019.1578538>
- Stoller, R. J. (1984). *Sex and Gender: The Development of Masculinity and Femininity*. Karnac Books. International psycho-analytical library. Retrieved from <https://books.google.am/books?id=N20pctSHUgC>
- True, J. (2003). Mainstreaming Gender in Global Public Policy. *International Feminist Journal of Politics*, 5(3), 368–396. <https://doi.org/10.1080/1461674032000122740>
- UN General Assembly, Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women, 18 December 1979, A/RES/34/180
- UN Women. (2016). *Progres of the World's Women 2015-2016*. Retrieved from <http://progress.unwomen.org>
- United Nations, & World Conference on Women. (1996). *The Beijing Declaration and the Platform for Action: Fourth World Conference on Women, Beijing, China, 4-15 September 1995*. New York: Dept. of Public Information, United Nations
- Woodward, K. (2011). *Putting gender on the agenda. In The short guide to gender* (pp. 1-20). Bristol, UK; Chicago, IL, USA: Bristol University Press. doi:10.2307/j.ctt1t89g0g.5
- Անդրեասյան, Դ., Բազարյան, Ա., Մանուկյան, Ս., Մուրադյան, Գ., Թորոսյան, Ա., Սարգսյան, Ծ. (2018) *Առողջապահության համակարգի գործունեության գնահատում*. Երևան, Հայաստան. Հասանելի է <https://nih.am/assets/pdf/atvk/226be970fc81ad43bdbd893aabe7651f.pdf>

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐ

Ազգային ժողով. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք (2017)

Ազգային ժողով. Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին օրենք

Ազգային ժողով. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին օրենք

Ազգային ժողով. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենք

Եվրոպական միություն. Բյուջետային աջակցության համաձայնագիր «Հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» (2018)

Եվրոպական միություն. ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (2017)

Հայաստանի Հանրապետության ազգային ժողով. (2019 սեպտեմբեր 22). Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավորներ. Հասանելի է՝ <http://parliament.am/deputies.php?lang=arm>

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք. (2016). Երևան, Հայաստան. Հասանելի է՝ <https://www.arlis.am/documentView.aspx?docid=105967>

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (2016). *Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2016*. Երևան, Հայաստան

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե. (2018). *Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական գրքույկ*. Երևան, Հայաստան. Հասանելի է՝ https://www.armstat.am/file/article/poverty_2017_a_2.pdf

Հայաստանի Հանրապետության 2017-2019 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր. (2019 սեպտեմբեր 22). Հասանելի է՝ <https://www.gov.am/files/docs/2015.pdf>

Հայաստանի Հանրապետության 2018-2020 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր. (2019 սեպտեմբեր 22). Հասանելի է՝ http://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/

Հայաստանի Հանրապետության 2019-2021 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր. (2019 սեպտեմբեր 22). Հասանելի է՝ http://www.minfin.am/hy/page/petakan_mijnazhamket_tsakhseri_tsragre/

Հայաստանի Հանրապետության 2020-2022 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր. (2019 սեպտեմբեր 22). Հասանելի է՝ <https://gov.am/files/docs/3502.pdf>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. (2012). *Գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ. Մեթոդական ձեռնարկ*. Երևան, Հայաստան. Հասանելի է՝ https://www.gov.am/u_files/file/xorhurdner/kananc-xorh/Gender-metodakan%20dzernark.pdf

ՀՀ կառավարություն. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»

ՀՀ կառավարություն. Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշում «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության հայեցակարգն ընդունելու մասին»

ՀՀ կառավարություն. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը եվ գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»

ՀՀ կառավարություն. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին»

ՀՀ ֆինանսների նախարարություն. Մեթոդական ցուցումներ. ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի եվ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման եվ դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման (2019)